Եվ եղավ խավար

հեղինակ՝ Այզեկ Ազիմով
թարգմանիչ՝ Ջուլիետա Ղազարյան (ռուսերենից)
աղբյուր՝ «Ուխտագնացություն դեպի երկիր»

Եթե աստղերը գիշերային երկնքում առկայծեին միայն հազար տարին մեկ անգամ, որպիսի՜ ջերմ հավատով կհամակվեին մարդիկ՝ սերնդեսերունդ պահպանելով հիշողությունը աստծո քաղաքի մասին։

ԷՄԵՐՍՈՆ

Ատոն77ը, Սարոյի համալսարանի ռեկտորը, մարտականորեն վեր ցցեց ներքեւի շրթունքը եւ ցասկոտ հայացքը գամեց երիտասարդ ժուռնալիստին։

Տերեմոն 762ը ուրիշ բան չէր էլ սպասում։ Երբ դեռ սկսնակ էր, եւ հոդվածները, որոնք այժմ արտատպում էին տասնյակ լրագրեր, դեղնակտուց պատանու սին երազանքներ էին միայն, արդեն այն ժամանակ նա մասնագիտանում էր «անհնարին» հարցազրույցների գծով։ Հաճախ էր կապտուկներ ու ջարդվածքներ ստանում, բայց փոխարենը սովորում էր սառնասրտություն ու ինքնավստահություն պահպանել բոլոր պարագաներում։

Այդ պատճառով էլ իջեցրեց բարեւելու համար պարզած ձեռքը, որն այդպես ցուցադրաբար հրաժարվեցին սեղմել, եւ հանգիստ սպասեց, մինչեւ մեղմանա զառամյալ ռեկտորի զայրույթը։ Բոլոր աստղագետները տարօրինակ մարդիկ են, իսկ Ատոնը, եթե գտնենք վերջին երկու ամսվա նրա արարքներից, տարօրինակից էլ տարօրինակ էր։

Ատոն 77ը վերստացավ խոսելու շնորհը ու, թեեւ հոչակավոր աստղագետի ձայնը դողում էր զսպված զայրույթից, խոսեց սովորականի պես հանդարտ, խնամքով ընտրելով բառերը։

— Գալով ինձ մոտ այդպիսի լպիրշ առաջարկությամբ, սըր, դուք դիվային լկտիություն եք ցուցաբերում…

— Բայց, սըր, վերջիվերջո…— լիզելով չորացած շրթունքները, երկչոտ ընդհատեց նրան Բինի 25ը՝ աստղադիտարանի լայնաթիկունք հեռալուսանկարիչը։

Ռեկտորը շրջվեց, ճերմակ հոնքերը սողացին դեպի վեր։

— Մի խառնվե՛ք, Բինի։ Ես պատրաստ եմ հավատալու, որ դուք այս մարդուն բերել եք այստեղ՝ ղեկավարվելով ամենաբարի մտադրություններով, սակայն այժմ չեմ հանդուրժի եւ ոչ մի առարկություն։

Տերեմոնը որոշեց, որ ինքն արդեն պետք է մասնակցի այդ խոսակցությանը։

— Ռեկտոր Ատոն, եթե դուք հնարավորություն տաք ինձ խոսելու…

— Ոչ, երիտասարդ,— առարկեց Ատոնը,— այն ամենը, ինչ դուք կարող էիք ասել, արդեն ասել եք այս վերջին երկու ամսվա ընթացքում ամեն օր լույս տեսնող ձեր հոդվածներում։ Դուք գլխավորում էիք լրագրային լայն կամպանիան, որի նպատակն էր խանգարել ինձ եւ իմ կոլեգաներին աշխարհը նախապատրաստելու այն սպառնալիքին, որն այժմ արդեն չի կարելի կանխել։ Դուք աստղադիտարանի անձնակազմին զուտ անձնական վիրավորանքներ էիք հասցնում եւ աշխատում էիք նրան ծաղրուծանակի առարկա դարձնել։

Ռեկտորը սեղանից վերցրեց սարոյան «Խրոնիկայի» համարը եւ մոլեգին թափահարեց։

— Նույնիսկ այնպիսի հանրահայտ լպիրշը, ինչպիսին դուք եք, նախ պետք է մտածեր, ապա նոր հայտնվեր ինձ մոտ խնդրանքով, որ հենց իրեն թույլ տամ այստեղ նյութեր հավաքել մի հոդվածի համար, որը կվերաբերի այսօր կատարվելիք իրադարձությանը։ Հենց իրեն՝ բոլոր ժուռնալիստներից։

Ատոնը լրագիրը շպրտեց հատակին, ձեռքը մեջքին դրած քայլեց դեպի պատուհանը։

— Կարող եք գնալ,— նետեց ուսի վրայից։ Նա մռայլ նայեց հորիզոնին, որտեղ մայր էր մտնում Գամման, մոլորակի վեց արեգակներից ամենապայծառը։ Լուսատուն արդեն դժգունել եւ դեղնել էր դեպի հեռուն ձգվող մշուշում, եւ Ատոնը գիտեր, որ եթե նորից տեսնի նրան, ապա միայն խելագար վիճակում։

Նա կտրուկ շրջվեց։

— Ո՛չ, սպասեք։ Այստեղ եկեք,— ձեռքի տիրական շարժումով կանչեց Ատոնը։— Ես ձեզ նյութ կտամ։

Ժուռնալիստը, որ բնավ էլ միտք չուներ գնալու, դանդաղ մոտեցավ ծերուկին։ Ատոնը ձեռքով ցույց տվեց երկինքը։

— Վեց արեգակներից երկնքում մնացել է միայն Բետան։ Դուք տեսնո՞ւմ եք այն։

Հարցն ավելորդ էր։ Բետան գտնվում էր գրեթե զենիթում։ Գամմայի պայծառ շողերի մարելուն զուգընթաց կարմրավուն Բետան շուրջն ամեն ինչ ներկում էր արտասովոր նարնջագույնով։ Բետան գտնվում էր աֆելիայի մեջ։ Տերեմոնը նրան այդքան փոքրիկ չէր տեսել ոչ մի անգամ։ Եվ հիմա Բետան էր լուսավորում Լագաշի երկինքը։

Լագաշի սեփական արեգակը՝ Ալֆան, որի շուրջը պտույտ էր գործում մոլորակը, գտնվում էր նրա մյուս կողմում, ինչպես եւ հեռավոր արեգակների մյուս երկու զույգերը։ Կարմիր գաճաճ Բետան (Ալֆայի ամենամոտ հարեւանուհին) մնացել էր մենության մեջ, չարագույժ մենության։

Արեւի ճառագայթներով ողողված Ատոնի դեմքը կասկարմիր էր թվում։

— Չորս ժամ էլ չի անցնի,— ասաց նա,— եւ մեր քաղաքակրթությունը կդադարի գոյություն ունենալ։ Եվ դա տեղի կունենա այն պատճառով, որ Բետան, ինչպես տեսնում եք, միայնակ է մնացել երկնքում։— Նա մռայլ ժպտաց։— Տպագրե՛ք սա։ Միայն թե կարդացող չի լինի։

— Բայց եթե անցնի չորս ժամ եւ… էլի չորս… ու ոչինչ չլինի՞,— վեհերոտ հարցրեց Տերեմոնը։

— Թող դա ձեզ չանհանգստացնի։ Շատ բան կլինի։

— Չեմ վիճում։ Եվ այնուամենայնիվ՝ եթե ոչինչ չլինի՞։

Բինի 25ը նորից համարձակվեց խոսել։

— Սըր, ինձ թվում է, դուք պիտի լսեք նրան։

— Գուցե այս հարցը քվեարկությա՞ն դնեք, ռեկտոր Ատոն,— ասաց Տերեմոնը։

Հինգ գիտնականները (աստղադիտարանի մյուս աշխատակիցները), որ մինչ այդ խելամիտ չեզոքություն էին պահպանում, լարվեցին։

— Դրա անհրաժեշտությունը չկա,— կտրեց Ատոնը։ Նա գրպանից հանեց ժամացույցը։— Քանի որ ձեր ընկեր Բինին այդքան պնդում է, ես ձեզ հինգ րոպե եմ տալիս։ Խոսեք։

— Լավ։ Դեհ, ի՞նչը կփոխվի, եթե դուք ինձ հնարավորություն տաք նկարագրել տեղի ունենալիքը որպես ականատես։ Եթե ձեր կանխազուշակումն իրականանա, իմ ներկայությունը ոչ մի բանի չի խանգարի, չէ որ տվյալ դեպքում իմ հոդվածը չի գրվի։ Մյուս կողմից, եթե ոչ մի բան տեղի չունենա, դուք պիտի ենթադրեք, որ լավագույն դեպքում ձեզ վրա պիտի ծիծաղեն։ Եվ մի՞թե լավ չի լինի, որ այդ ծիծաղը ղեկավարի բարեկամական ձեռքը։

— Դուք ձե՞ր ձեռքն եք անվանում բարեկամական,— խայթեց Ատոնը։

— Իհարկե։— Տերեմոնը նստեց եւ ոտքը գցեց ոտքին։— Իմ հոդվածները երբեմն խիստ են եղել, բայց ամեն անգամ ես հարցը բաց եմ թողել։ Վերջիվերջո հիմա այն ժամանակը չէ, երբ կարելի է Լագաշին քարոզել «աշխարհի վերջի» մասին։ Դուք պիտի հասկանաք, որ մարդիկ այլեւս չեն հավատում Հայտնությունների գրքին, եւ նրանց զայրացնում է, որ գիտնականները ամեն ինչ շրջում են հարյուր ութսուն աստիճանով ու ասում, որ Պաշտամունքի պահապանները այնուամենայնիվ իրավացի էին…

— Ոչ ոք այդպիսի բան չի ասում, երիտասարդ,— ընդհատեց նրան Ատոնը։— Թեեւ Պաշտամունքի պահապանները շատ տեղեկություններ հայտնեցին մեզ, բայց մեր հետազոտությունների արդյունքները զերծ են պաշտամունքային միստիցիզմից։ Փաստերը ինքնին փաստեր են, իսկ այսպես կոչված Պաշտամունքի «առասպելը»,

անկասկած հենվում է որոշակի փաստերի վրա։ Մենք դրանք բացատրեցինք, վերացնելով նախկին խորհրդավորությունը։ Հավատացնում եմ ձեզ, որ Պաշտամունքի պահապանները այժմ մեզ ավելի շատ են ատում, քան դուք։

— Ես ոչ մի ատելություն չեմ տածում ձեր հանդեպ։ Ես պարզապես փորձում եմ ապացուցել, որ լայն հասարակայնությունը վատ է տրամադրված։ Նա դժգոհ է։

Ատոնը հեգնանքով ծռմռեց շրթունքները։

— Էհ, թող դժգոհ լինի։

— Այո, բայց վաղն ի՞նչ է լինելու։

— Ոչ մի վաղ էլ չի լինի։

— Իսկ եթե լինի՞։ Ենթադրենք, որ կլինի… Հապա պատկերացրեք, թե ինչ կկատարվի։ Դժգոհությունը կարող է վերաճել մի ավելի լուրջ բանի։ Չէ որ, ինչպես ձեզ հայտնի է, այս երկու ամսվա ընթացքում գործնական ակտիվությունը նվազել է։ Ավանդատուները այնքան էլ չեն հավատում, որ եկել է աշխարհի վերջը, բայց այժմ գերադասում են իրենց փողերը պահել։ Քաղքենիները նույնպես չեն հավատում ձեզ, բայց եւ այնպես… հետաձգում են գարնանային գնումները։ Ահա թե ինչ վիճակ է։ Հենց այս ամենը վերջանա, բորսայի տնօրինողները կկպչեն ձեզնից։ Նրանք կասեն, քանի որ խելագարները… ներեցեք ինձ, ընդունակ են երկրի բարգավաճումն ամեն րոպե դնել սպառնալիքի տակ, մոգոնելով անհեթեթ գուշակություններ, ապա մոլորակը պետք է մտածի, թե ինչպես զսպի նրանց։ Եվ այն ժամանակ թեժ օրեր կսկսվեն, սըր։

Ռեկտորը կատաղի հայացքով ոտից գլուխ չափեց ժուռնալիստին։

— Եվ դուք ի՞նչ ելք եք առաջարկում։

Տերեմոնը ժպտաց։

— Ես ձեզ առաջարկում եմ՝ ստանձնել հարցի լուսաբանումը մամուլում։ Ես կարող եմ գործն այնպես շրջել, որ այն թվա սոսկ ծիծաղելի։ Իհարկե, դիմանալը դժվար կլինի, որովհետեւ ձեզ իսկական ապուշներ պիտի սարքեմ, բայց եթե ես մարդկանց ստիպեմ ծիծաղել ձեզ վրա, նրանց զայրույթը կմեղմանա։ Իսկ դրա փոխարեն իմ հրատարակիչը միայն մի բան է պահանջում՝ ինձնից բացի ուրիշ ոչ մեկին տեղեկություն չտալ։

— Սըր,— գլխով հավանություն տալով նրա ասածներին, վրա բերեց Բինին,— բոլորս էլ մտածում ենք, որ նա ճիշտ է։ Վերջին երկու ամսվա ընթացքում մենք ամեն ինչ նախատեսել ենք, բացի այն մեկ միլիոներորդ հավանականությունից, որ մեր տեսության կամ մեր հաշվարկների մեջ կարող է թաքնված լինել ինչոր մի սխալ։ Մենք դա եւս պետք է նախատեսենք։

Մյուսները հավանություն տալով աղմկեցին, եւ Ատոնը այնպես կնճռոտեց դեմքը, ասես բերանում սոսկալի դառնահամ զգաց։

— Այդ դեպքում կարող եք մնալ, եթե կուզեք։ Սակայն, խնդրում եմ, աշխատեք չխանգարել մեզ։ Հիշեցեք նաեւ, որ այստեղ ղեկավարը ես եմ, եւ ինչպիսի տեսակետներ էլ որ դուք հայտնեք ձեր հոդվածներում, ես պահանջում եմ համագործակցություն եւ հարգանք դեպ…

Նա խոսում էր ձեռքերը մեջքին դրած, եւ նրա կնճռապատ դեմքը ամուր վճռականություն էր արտահայտում։ Եվ կարող էր խոսել անսահմանորեն երկար, եթե մի նոր ձայն չընդհատեր նրան։

— Պա՜հ, պա՜հ, պա՜հ,— հնչեց բարձր տենորը, եւ ներս մտնողի թմբլիկ դեմքը լայնացավ ինքնագոհ ժպիտից։— Ինչո՞ւ եք սգվորի տեսք ընդունել։ Հուսով եմ, բոլորդ էլ պահպանում եք հանգստություն եւ հոգեկան կայունություն։

Ատոնը տարակուսած խոժոռվեց եւ գրգռված հարցրեց.

— Ո՞ր սատանան ձեզ այստեղ բերեց, Շիրին։ Ես կարծում էի, դուք ուզում եք մնալ Ապաստարանում։

Շիրինը ծիծաղեց եւ փլվեց աթոռին։

— Գրողի ծոցը թող կորչի այդ Ապաստարանը։ Այն ինձ ձանձրացրեց։ Ես ուզում եմ այստեղ լինել, իրադարձությունների կենտրոնում։ Մի՞թե, ըստ ձեզ, ես բոլորովին զուրկ եմ հետաքրքրությունից։ Ես ուզում եմ տեսնել Աստղերը, որոնց մասին անդադար խոսում են Պաշտամունքի պահապանները։— Նա ձեռքերն իրար շփեց եւ ավելացրեց արդեն ավելի լուրջ տոնով։— Դրսում ցուրտ է։ Այնպիսի քամի է, որ քթիցդ սառցալուլաներ են կախվում։ Բետան այնքան հեռու է, որ բոլորովին չի տաքացնում։

Ճերմակահեր ռեկտորը հանկարծ պոռթկաց.

— Ինչո՞ւ եք ամեն կերպ աշխատում հիմարություններ անել, Շիրին։ Դուք ի՞նչ օգուտ կարող եք տալ մեզ այստեղ։

— Իսկ ի՞նչ օգուտ կարող եմ տալ այնտեղ։— Շիրինը շինծու հնազանդությամբ թափահարեց ձեռքերը։— Հոգեբանը Ապաստարանում ոչ մի անելիք չունի։ Այնտեղ պետք են գործնական մարդիկ եւ առողջ կանայք, որոնք կարող են երեխաներ ծնել։ Իսկ ե՞ս։ Գործնական մարդ լինելու համար կշռում եմ հարյուր ֆունտ ավելի, իսկ երեխա ծնել՝ հազիվ թե կարողանամ։ Էլ ինչու մի ավելորդ բերան մնա այնտեղ։ Ես այստեղ ինձ զգում եմ իմ տեղում։

— Իսկ ի՞նչ բան է Ապաստարանը,— հարցրեց Տերեմոնը։

Շիրինը կարծես հիմա տեսավ ժուռնալիստին։ Նա մռայլվեց եւ ուռցրեց կլոր այտերը։

— Իսկ դուք, շիկամազ, ո՞վ եք։

Ատոնը զայրացած սեղմեց շրթունքները, բայց հետո դժկամորեն փնթփնթաց.

— Սա Տերեմոն 762ն է, լրագրող։ Կարծում եմ, լսած կլինեք նրա մասին։

Ժուռնալիստը մեկնեց ձեռքը։

— Իսկ դուք, անշուշտ, Շիրին 501ն եք Սարոյի համալսարանից։ Ես լսել եմ ձեր մասին։

Ու նա կրկնեց իր հարցը։— Ի՞նչ բան է Ապաստարանը։

— Դեհ,— ասաց Շիրինը,— մեզ, այնուամենայնիվ, հաջողվեց մի խումբ մարդկանց համոզել, որ մեր կանխագուշակումները ճիշտ են… ը՛ը… ինչպես ավելի տպավորիչ ասեմ… ճակատագրական վախճանի մասին, եւ այդ մի բուռ մարդիկ համապատասխան միջոցներ ձեռնարկեցին։ Հիմնականում դրանք աստղադիտարանի աշխատողների ընտանիքներն են, համալսարանի որոշ դասախոսներ եւ մի քանի կողմնակի մարդիկ։ Բոլորը միասին կլինեն երեք հարյուր, բայց այս թվի երեք քառորդը կազմում են կանայք ու երեխաները։

— Հասկանո՛ւմ եմ։ Նրանք պատսպարվել են այնտեղ, որտեղ Խավարը եւ այս… ը՛ը… Աստղերը չեն հասնի Ապաստարան, ու նրանք ողջ կմնան, երբ մնացյալ ամբողջ աշխարհը կխելագարվի։ Եթե նրանց հաջողվի, իհարկե։ Չէ որ դա դժվար կլինի։ Մարդկությունը կզրկվի բանականությունից, մեծ քաղաքները կկորչեն բոցերի մեջ. այսպիսի իրավիճակում դժվար կլինի կենդանի մնալը։ Բայց նրանք ունեն պաշարներ, ջուր, հուսալի ապաստան, զենք…

— Նրանք ոչ միայն դա ունեն,— ասաց Ատոնը,— այնտեղ են մեր բոլոր նյութերը, բացառությամբ նրանցից, որ կհավաքենք այսօր։ Այդ նյութերը կենսականորեն անհրաժեշտ են հաջորդ ցիկլի համար, եւ հենց դրանք պիտի պահպանվեն։ Մնացածը կարեւոր չէ։

Տերեմոնը երկարուձիգ սուլեց եւ մտքերի մեջ ընկավ։ Սեղանի մոտ կանգնած մարդիկ հանեցին շախմատի տախտակը եւ վեց հոգով սկսեցին խաղալ։ Քայլերը արվում էին արագ եւ լուռ։ Բոլորի աչքերը ուղղված էին տախտակին։

Տերեմոնը մի քանի րոպե ուշադիր նայում էր խաղացողներին, իսկ հետո վեր կացավ եւ մոտեցավ Ատոնին, որը նստել էր քիչ հեռու եւ շշուկով խոսում էր Շիրինի հետ։

— Լսեք,— ասաց նա։— Եկեք գնանք մի ուրիշ տեղ, որ չխանգարենք մյուսներին։ Ես ուզում եմ մի բան հարցնել։

Զառամյալ աստղագետը խոժոռվեց եւ մռայլ նայեց նրան, իսկ Շիրինը ուրախ պատասխանեց.

— Հաճույքով։ Մի քիչ խոսելուց ես միայն օգուտ կստանամ։ Հենց նոր Ատոնը ինձ պատմում էր, թե, ձեր կարծիքով, ինչ արձագանք կարելի է սպասել, եթե կանխագուշակումը չկատարվի… Եվ համաձայն եմ ձեզ հետ։ Ի դեպ, ես գրեթե միշտ կարդում եմ ձեր հոդվածները, ու ձեր հայացքները, ընդհանուր առմամբ, դուր են գալիս ինձ։

— Շիրին, խնդրում եմ ձեզ…— փնթփնթաց Ատոնը։

— Ի՞նչ։ Լավ, լավ։ Մենք կգնանք հարեւան սենյակը։ Համենայն դեպս, այնտեղ բազկաթոռները ավելի փափուկ են։

Հարեւան սենյակի բազկաթոռներն իրոք փափուկ էին։ Պատուհանները ծածկված էին ծանր, կարմիր վարագույրներով, իսկ հատակին փռված էր վարդագույն գորգ։ Բետայի աղյուսակարմիր ճառագայթներով ողողված վարագույրները եւ գորգը չորացած արյան գույն էին ստացել։

Տերեմոնը ցնցվեց։

— Ես տասը հարյուրանոց կտայի մի վայրկյան միայն իսկական սպիտակ լույս տեսնելու համար։ Ափսոս, Գամման ու Դելտան չկան երկնքում։

— Ի՞նչ էիք ուզում մեզ հարցնել,— ընդհատեց նրան Ատոնը։— Խնդրում եմ հիշեք, որ մենք քիչ ժամանակ ունենք։ Մի ժամ հետո կբարձրանանք վերեւ, եւ արդեն խոսելու ժամանակ չի լինի։

— Դե, ուրեմն,— ասաց Տերեմոնը՝ ետ ընկնելով բազկաթոռի թիկնակին եւ խաչելով ձեռքերը։— Բոլորդ այստեղ այնքան լուրջ եք, որ ես սկսում եմ հավատալ ձեզ։ Ու ես կուզեի, որ ինձ բացատրեք, թե իսկապես ի՛նչ է կատարվում։

Ատոնը պայթեց։

— Արդյոք չե՞ք ուզում ասել, որ դուք մեզ ծաղրում էիք, նույնիսկ կարգին չիմանալով, թե մենք ինչ ենք պնդում։

Ժուռնալիստը շփոթված ժպտաց։

— Դեհ, այդքան էլ չէ, սըր։ Ես ընդհանուր պատկերացում ունեմ։ Դուք պնդում եք, որ մի քանի ժամ հետո ամբողջ աշխարհը կպարուրվի խավարով, եւ ողջ մարդկությունը կզրկվի բանականությունից՝ կխելագարվի։ Ես միայն հարցնում եմ, թե դուք ինչպե՞ս եք դա բացատրում գիտականորեն։

— Ոչ, հարցն այդպես մի՛ դրեք,— միջամտեց Շիրինը։— Այս դեպքում, եթե Ատոնը ցանկանա պատասխանել, դուք կկորչեք թվերի եւ դիագրամների ծովի մեջ։ Եվ այդպես էլ ոչինչ չեք հասկանա։ Իսկ այ եթե ինձ հարցնեք, ապա կլսեք հասարակ մահկանացուին միանգամայն մատչելի պատասխան։

— Դե լավ, համարեք, որ ձեզ եմ այդ հարցը տվել։

— Այդ դեպքում ես նախ կուզեի խմել։

Նա իրար շփեց ձեռքերը եւ նայեց Ատոնին։

— Ջո՞ւր,— փնթփնթալով հարցրեց Ատոնը։

— Հիմարություններ դուրս մի՛ տվեք։

— Այդ դուք եք հիմարություններ դուրս տալիս։ Ո՛չ մի ոգելից խմիչք այսօր։ Իմ աշխատակիցները կարող են չդիմանալ գայթակղությանը եւ կհարբեն։ Ես իրավունք չունեմ ռիսկի դիմելու։

Հոգեբանը քթի տակ ինչոր բան մռթմռթաց։ Շրջվելով Տերեմոնի կողմը՝ սուր հայացքը գամեց նրան ու սկսեց.

— Դուք, անշուշտ, գիտեք, որ Լագաշի քաղաքակրթության պատմությունը ցիկլային բնույթ է կրում… Կրկնում եմ՝ ցիկլային։

— Ես գիտեմ,— զգուշորեն նկատեց Տերեմոնը,— որ դա տարածված հնագիտական վարկած է։ Ուրեմն, այժմ դա բացարձակ ստո՞ւյգ են համարում։

— Թերեւս։ Մեր այս վերջին հարյուրամյակում այն ընդհանուր ճանաչում է ստացել։ Այդ ցիկլային բնույթը հանդիսանում է… ավելի ճիշտ հանդիսանում էր մեծագույն առեղծվածներից մեկը։ Մենք հայտնաբերել ենք մի շարք քաղաքակրթություններ՝ ինը քաղաքակրթություն, բայց կարող են եղած լինել նաեւ ավելին։ Բոլոր այդ քաղաքակրթությունները իրենց զարգացման մակարդակով հասնում էին մեր մակարդակին եւ բոլորն էլ, առանց բացառության, իրենց կուլտուրայի զարգացման ամենաբարձր աստիճանում կործանվում էին կրակից։ Ոչ ոք չի կարող ասել, թե ինչու էր դա տեղի ունենում։ Կուլտուրայի բոլոր կենտրոնները այրվում էին հիմնովին եւ չէր մնում որեւէ բան, որը կհուշեր աղետների պատճառը։

Տերեմոնը ուշադիր լսում էր։

— Իսկ մի՞թե մենք քարե դար չենք ունեցել։

— Հավանաբար, եղել է, սակայն գործնականում այդ մասին մեզ հայտնի է միայն, որ մարդիկ այն ժամանակ այնքան էլ շատ չեն տարբերվել խելոք կապիկներից։ Այնպես որ քարե դարը կարելի է հաշվի չառնել։

— Հասկանում եմ, շարունակեք։

— Այս կրկնվող աղետների նախկին բացատրությունները կրում էին քիչ թե շատ երեւակայական բնույթ։ Ոմանք ասում էին, որ Լագաշի վրա պարբերաբար հորդացել են հրե անձրեւներ, մյուսները պնդում էին, որ ժամանակ առ ժամանակ Լագաշն անցնում է արեւի միջով, երրորդները՝ էլ ավելի անհեթեթ բաներ էին ասում։ Սակայն գոյություն ուներ մի տեսություն՝ միանգամայն տարբեր բոլոր մյուսներից, եւ այն մեզ է հասել դարերի խորքից։

— Ես գիտեմ դուք ինչի մասին եք խոսում։ Դա Աստղերի մասին առասպելն է, որ գրված է Պաշտամունքի պահապանների Հայտնությունների գրքում։

— Միանգամայն ճիշտ եք,— գոհունակությամբ նշեց Շիրինը։— Պաշտամունքի պահապանները պնդում են, իբր յուրաքանչյուր երկու հազար հինգ հարյուր տարին մեկ Լագաշն ընկնում է մի վիթխարի անձավի մեջ, այնպես որ բոլոր արեգակները անհետանում են, եւ ամբողջ աշխարհը պարուրվում է խավարով։ Իսկ հետո, ասում են

նրանք, հայտնվում են այսպես կոչված Աստղերը, որոնք խլում են մարդկանց հոգիները եւ նրանց դարձնում անբանական անասուն, ու հենց մարդիկ էլ կործանում են իրենց իսկ ստեղծած քաղաքակրթությունը։ Պաշտամունքի պահապանները, իհարկե, այս ամենը հեղեղում են աներեւակայելի քանակության կրոնական միստիկայով, սակայն հիմնական գաղափարը սա է։— Շիրինը լռեց ու, նորից շունչ առնելով, շարունակեց։— Իսկ հիմա մենք մոտենում ենք Համընդհանուր Ձգողականության Տեսությանը։

Նա այնպես խոսեց, կարծես իր արտասանած յուրաքանչյուր բառը սկսվում էր մեծատառով, եւ այստեղ Ատոնը շրջվեց պատուհանի մոտից, արհամարհանքով փնչացրեց ու բարկացած դուրս եկավ սենյակից։

Շիրինն ու Տերեմոնը նայեցին նրա ետեւից։

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց Տերեմոնը։

— Առանձնապես ոչ մի բան,— պատասխանեց Շիրինը։— Նրա աշխատակիցներից երկուսն էլ պիտի այստեղ գային մի քանի ժամ առաջ, բայց մինչեւ հիմա չկան։ Իսկ նրա մոտ ամեն մի մարդը հաշվված է. բոլորը, բացի ամենաանհրաժեշտ մասնագետներից, գնացել են Ապաստարան։

— Դուք կարծում եք, նրանք փախե՞լ են։

— Ո՞վ։ Ֆարոն եւ Յիմո՞տը։ Իհարկե, ոչ։ Եվ այնուամենայնիվ եթե նրանք չգան մեկ ժամվա ընթացքում, դա կբարդացնի վիճակը։— Նա անսպասելիորեն վեր թռավ տեղից, եւ աչքերը ուրախ փայլատակեցին։— Սակայն քանի որ Ատոնը գնաց… Ոտնաթաթերի վրա զգուշորեն մոտենալով պատուհանին՝ նա պպզեց ու պատուհանի տակ սարքված փոքրիկ պահարանից հանեց մի շիշ եւ թափահարեց։ Կարմիր հեղուկը գայթակղիչ կլկլաց շշի մեջ։

— Ես այդպես էլ գիտեի, որ Ատոնը չէր իմանում սրա մասին,— նկատեց նա, հապշտապ վերադառնալով դեպի բազկաթոռը։— Ահա։ Մենք ընդամենը մի բաժակ ունենք, եւ դա դուք վերցրեք, քանի որ հյուր եք։ Ես կխմեմ շշից։— Ու նա զգուշորեն լցրեց բաժակը։

Տերեմոնը վեր կացավ, պատրաստվելով հրաժարվել, բայց Շիրինը սաստեց նրան ազդու հայացքով։

— Երիտասարդ, մեծերին պետք է հարգել։

Ժուռնալիստը նստեց նահատակի տեսքով։

— Դե շարունակեք պատմել, ծեր խաբեբա։

Հոգեբանը շիշը մոտեցրեց բերանին, եւ նրա ադամախնձորը սկսեց ցնցվել։ Հետո գոհունակությունից փնչացրեց, ճպպացրեց շրթունքները եւ շարունակեց.

— Իսկ դուք ի՞նչ գիտեք ձգողականության մասին։

— Միայն այն, որ հայտնաբերվել է բոլորովին վերջերս եւ գրեթե չի մշակված, իսկ բանաձեւերն այնքան բարդ են, որ ամբողջ Լագաշում միայն տասներկու հոգի են ընդունակ այն հասկանալու։

— Հիմարությո՛ւն։ Դատարկ բաներ եք ասում։ Ես երկու բառով կշարադրեմ այդ տեսության էությունը։ Համընդհանուր ձգողականության օրենքը պնդում է, որ Տիեզերքի բոլոր մարմինների միջեւ գոյություն ունի կապող ուժ, եւ ցանկացած երկու տվյալ մարմինները իրար կապող ուժը համաչափ է նրանց զանգվածների արտադրյալին՝ բաժանած նրանց միջեւ ընկած տարածության քառակուսու վրա։

— Միայն այսքա՞նը։

— Դա լիովին բավական է։ Պահանջվեց չորս հարյուրամյակ, մինչեւ որ հայտնաբերվեց այդ օրենքը։

— Ինչո՞ւ այդքան շատ։ Ձեր շարադրածով այն շատ պարզ է թվում։

— Որովհետեւ մեծագույն օրենքները չեն հայտնաբերվում ոգեշնչման պահին, ինչպես մտածում են շատերը։ Նրանց հայտնաբերման համար անհրաժեշտ է ամբողջ աշխարհի գիտնականների համատեղ աշխատանքը հարյուրամյակների ընթացքում։ Այն բանից հետո, երբ Գենովի 41ը հայտնաբերեց, որ Լագաշն է պտտվում Ալֆա արեգակի շուրջը, եւ ոչ թե հակառակը (իսկ դա տեղի է ունեցել չորս հարյուր տարի առաջ), աստղագետները շատ երկար աշխատեցին։ Նրանք դիտեցին, ուսումնասիրեցին, վերլուծեցին եւ ստույգ որոշեցին վեց արեգակների բարդ շարժումը։ Բազմաթիվ տեսություններ էին առաջադրված, դրանք ստուգվում էին, փոփոխվում, մերժվում եւ ինչոր բանի վերածվում։ Դա հրեշավոր աշխատանք էր։

Տերեմոնը մտախոհ գլխով արեց եւ նրան մեկնեց բաժակը։ Շիրինը դժկամորեն թեքեց շիշը, եւ մի քանի սուտակագույն կաթիլներ ընկան բաժակի մեջ։

— Քսան տարի առաջ,— շարունակեց նա, թրջելով կոկորդը,— վերջապես ապացուցվեց, որ Համընդհանուր ձգողականության օրենքը ստույգ բացատրում է վեց արեգակների ուղեծրային շարժումը։ Դա մեծ հաղթանակ էր։

Շիրինը վեր կացավ եւ գնաց դեպի պատուհանը, շիշը վայր չդնելով ձեռքից։

— Իսկ հիմա մոտենում ենք ամենագլխավորին։ Վերջին տասնամյակի ընթացքում այն ուղեծիրը, որով Լագաշը պտտվում է Ալֆա արեգակի շուրջը, կրկին հաշվարկվեց նոր օրենքի համաձայն, եւ պարզվեց, որ ստացված արդյունքները չեն համապատասխանում իրական ուղեծրին, թեեւ հաշվի էին առնված մյուս բոլոր արեգակներից առաջացող բռնկումները։ Կամ օրենքն էր սխալ, կամ գոյություն ուներ եւս մեկ անհայտ գործոն։

Տերեմոնը մոտեցավ Շիրինին, որը պատուհանի մոտ կանգնած նայում էր Սարոյի աշտարակաձողերին, որոնք արնակարմիր գույնով հուրհրատում էին հորիզոնում՝ անտառապատ բլուրների ետեւում։ Մի հայացք գցելով Բետային, ժուռնալիստը զգաց

իր մեջ աճող անվստահությունը եւ տագնապը։ Պստլիկ կարմիր կետը չարագույժ բոցկլտում էր զենիթում։

— Շարունակեք, սըր,— կամաց ասաց նա։

•

— Աստղագետները տարիներ շարունակ դոփում էին տեղում, եւ ամեն մեկն առաջարկում էր էլ ավելի անհավանական տեսություն, քան նախորդները, մինչեւ որ… մինչեւ որ Ատոնը ինչոր ներքին բնազդով չդիմեց Պաշտամունքին։ Պաշտամունքի գլխավորը՝ Սոր 5ը, իր տրամադրության տակ ուներ այնպիսի տեղեկություններ, որոնք զգալիորեն հեշտացրին պրոբլեմի լուծումը։ Ատոնը գնաց նոր ուղիով։ Իսկ գուցե գոյություն ունի եւս մեկ անլուսատու մոլորակային մարմի՞ն, որը նման է Լագաշին։ Այդ դեպքում, բնականաբար, նա կփայլի միայն անդրադարձված լույսով, եւ եթե այդ մարմնի մակերեսը բաղկացած է նույնպիսի երկնագույն ապարներից, ինչպես մեր Լագաշի մակերեսի մեծ մասը, ապա կարմիր երկնքում արեգակների հավերժական փայլատակումը նրան դարձրել է անտեսանելի, կարծես թե կլանել է նրան։

Տերեմոնը սուլեց։

— Ի՜նչ անհեթեթ միտք է։

— Ձեր կարծիքով, անհեթե՞թ է։ Դե, ուրեմն, լսեք։ Ենթադրենք, որ այդ մարմինը պտտվում է Լագաշի շուրջը այնպիսի հեռավորությամբ, այնպիսի ուղեծրով եւ օժտված է այնպիսի զանգվածով, որ նրա ձգողականությունը ճշտորեն բացատրում է Լագաշի ուղեծրի շեղումը տեսականից… Դուք գիտե՞ք, թե ինչ կլիներ այդ ժամանակ։

Ժուռնալիստը օրորեց գլուխը։

— Ժամանակ առ ժամանակ այդ մարմինը իրենով պիտի ծածկեր արեւներից մեկնումեկը,— ասաց Շիրինը եւ թափով դատարկեց շիշը։

— Ու երեւի հենց այդպես էլ լինում է,— հաստատ ասաց Տերեմոնը։

— Այո՛։ Սակայն նրա պտույտի հարթությունում միայն մեկ արեւ կա,— նա մատն ուղղեց փոքրիկ արեւի կողմը,— Բետան։ Եվ պարզվել է, խավարումը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ մեր կիսագնդի վերեւում բոլոր արեւներից մնում է միայն Բետան, որը գտնվում է Լագաշից առավելագույն հեռավորության վրա։ Իսկ Լուսինը այդ ժամանակ գտնվում է նվազագույն հեռավորության վրա։ Լուսնի տեսանելի տրամագիծը յոթ անգամ գերազանցում է Բետայի տրամագիծը, այնպես որ նրա ստվերը ծածկում է ամբողջ մոլորակը, եւ խավարումը տեվում է կես օր, ըստ որում Լագաշի վրա չի մնում եւ ոչ մի լուսավորված կետ։ Եվ այդպիսի խավարում տեղի է ունենում յուրաքանչյուր երկու հազար քառասունինը տարին մեկ անգամ։

Տերեմոնի դեմքի ոչ մի մկանը չցնցվեց։

— Սա էլ հենց կարող է լինել իմ հոդվածի նյո՞ւթը։

Հոգեբանը գլխով արեց։

— Այո, սա է բոլորը։ Սկզբում խավարումը (այն կսկսվի երեք քառորդ ժամ հետո)… ապա համատարած Խավարը եւ, գուցե, տխրահռչակ Աստղերը… հետո խելահեղություն եւ ցիկլի վախճան։

Շիրինը մտքերի մեջ ընկավ եւ մռայլ ավելացրեց.

— Մեր տրամադրության տակ ունեինք միայն երկու ամիս (ես խոսում եմ աստղադիտարանի աշխատակիցների մասին), չափազանց փոքր ժամկետ, որպեսզի Լազաշին ապացուցենք իրեն սպառնացող վտանգը։ Գուցե դրա համար երկու հարյուրամյակն էլ չէր բավականացնի։ Սակայն Ապաստարանում պահպանվում են մեր գրառումները, եւ այսօր մենք կլուսանկարենք խավարումը։ Հաջորդ ցիկլը հենց սկզբից կիմանա ճշմարտությունը, եւ երբ վրա կհասնի հաջորդ խավարման ժամանակը, մարդկությունը վերջապես պատրաստ կլինի դրան։ Ի դեպ, սա էլ կարող է նյութ ծառայել ձեր հոդվածի համար։

Տերեմոնը բացեց պատուհանը, եւ պոռթկուն քամին ալեկոծեց վարագույրները։ Սառը քամին խառնշտում էր ժուռնալիստի մազերը, իսկ նա նայում էր իր ձեռքին, որ լուսավորված էր արեւի բոսորագույն լույսով։ Հանկարծ նա շրջվեց, եւ զայրացած ասաց.

— Իսկ ինչո՞ւ ես պիտի հանկարծ խելագարվեմ այդ Խավարի պատճառով։

Շիրինը, ժպտալով իր մտքերի վրա, ձեռքում մեքենաբար պտտում էր դատարկ շիշը։

— Երիտասարդ, իսկ դուք երբեւէ եղե՞լ եք Խավարի մեջ։

Ժուռնալիստը հենվեց պատին եւ մտքերի մեջ ընկավ։

— Ոչ։ Թերեւս, ոչ։ Բայց ես գիտեմ, թե դա ինչ բան է։

Նա անորոշ շարժեց մատները, բայց հետո ասաց.— Դա այն է, երբ պարզապես մութ է։ Ինչպես քարանձավում։

— Իսկ դուք քարանձավում եղե՞լ եք։

— Քարանձավո՞ւմ։ Ոչ, իհարկե։

— Ես այդպես էլ կարծում էի։ Անցյալ շաբաթ ես փորձեցի, որպեսզի ինքս ինձ ստուգեմ… Բայց պարզապես փախա։ Ես առաջ էի գնում, մինչեւ որ քարանձավի մուտքը վերածվեց լույսի բծի, իսկ շուրջն ամեն ինչ սեւ էր։ Մտքովս անգամ չէր անցնի, որ իմ քաշի մարդն ընդունակ է այդպես վազելու։

— Դե, եթե ազնվորեն ասեմ,— արհամարհալից ծռմռելով շրթունքները, ասաց Տերեմոնը,— ես դժվար թե փախչեի…

Հոգեբանը, բարկացած խոռոժվելով, սեւեռուն նայեց Տերեմոնին։

— Իսկ դուք պարծենկոտ եք, ինչպես տեսնում եմ։ Հապա մի փորձեք փակել վարագույրները։

Տերեմոնը տարակուսանքով նայեց նրան։

— Ինչի՞ համար։ Եթե երկնքում լիներ չորս կամ հինգ արեւ, գուցեեւ արժեր լույսը պակասացնել, բայց հիմա առանց այն էլ լույսը քիչ է։

— Ճիշտ այդպես։ Քաշեք վարագույրը, իսկ հետո եկեք այստեղ եւ նստեք։

— Լավ։

Տերեմոնը քաշեց վարագույրից կախված քուղը։ Փայտե ձողին հագցված պղնձե օղակները զնգացին, կարմիր վարագույրները փակեցին պատուհանը, եւ սենյակը սեղմվեց կարմրավուն կիսախավարից։

Լռության մեջ խուլ հնչեցին Տերեմոնի քայլերը։ Սակայն, սեղանին դեռ չմոտեցած, նա կանգ առավ։

— Ես ձեզ չեմ տեսնում, սըր,— շշնջաց նա։

— Շոշափելով եկեք,— լարված ձայնով խորհուրդ տվեց Շիրինը։

— Բայց ես չեմ տեսնում ձեզ,— ծանր շնչելով ասաց Ժուռնալիստը։— Ես ոչինչ չեմ տեսնում։

— Իսկ դուք ի՞նչ էիք կարծում, մռայլ հարցրեց Շիրինը։— Եկեք այստեղ եւ նստեք։

Նորից լսվեցին դանդաղ ու անվստահ ոտնաձայները։ Լսվեց, թե Տերեմոնը ինչպես էր շոշափելով փնտրում աթոռը։ Ժուռնալիստը խռպոտ ձայնով խոսեց.

— Եկա։ Ես… Ամեն ինչ նորմալ է։

— Դա ձեզ դո՞ւր է գալիս։

— Ոչ…։ Զզվելի է։ Ասես պատեր լինեն…— նա լռեց։— Ասես պատերը տեղից շարժվել, առաջ են եկել։ Ես անընդհատ ուզում եմ դրանք ետ հրել։ Բայց խելքս չեմ թռցնում։ Եվ ընդհանրապես այդ զգացողությունը գնալով պակասում է։

— Լավ։ Հիմա ետ քաշեք վարագույրը։

Մթության մեջ լսվեցին կամացուկ ոտնաձայներ եւ վարագույրի շրշյունը։ Տերեմոնը շոշափելով գտավ քուղը, եւ լսվեց բացվող վարագույրի հաղթական ձայնը։ Կարմիր գույնը ներխուժեց սենյակ եւ Տերեմոնը ուրախ բացականչեց՝ տեսնելով լույսը։

Շիրինը ձեռքի ափով սրբեց ճակատի քրտինքը եւ բեկբեկուն ձայնով ասաց.

— Իսկ սա ընդամենը մթություն էր սենյակում։

— Միանգամայն տանելի է,— անհոգ պատասխանեց Տերեմոնը։

— Այո, սենյակում։ Իսկ դուք երկու տարի առաջ եղե՞լ եք Ջոնգլորում… Հարյուրամյակի ցուցահանդեսին։

— Ոչ, չուզեցի։ Վեց հազար մղոն կտրել ցուցահանդես դիտելու համար՝ չարժեր։

— Իսկ ես եղա այնտեղ։ Դուք երեւի լսե՞լ եք «Խորհրդավոր թունելի» մասին, որը նսեմացրեց մեր բոլոր ատրակցիոնները, համենայն դեպս՝ առաջին ամսում։

— Այո։ Եթե չեմ սխալվում, դրա հետ ինչոր խայտառակ պատմություն է կապված։

— Չեք սխալվում, բայց գործը կոծկեցին։ Ուրեմն, այդ «Խորհրդավոր թունելը» մեկ մղոն երկարությամբ սովորական թունել էր… բայց առանց լուսավորության։ Մարդը նստում էր բաց վագոնում եւ տասնհինգ րոպե գնում խավարի միջով։ Քանի դեռ այդ զվարճալիքը չէին արգելել, այն մեծ համբավ ուներ։

— Իհարկե։ Մարդկանց դուր է գալիս վախի զգացողությունը, եթե դա սոսկ միայն խաղ է։ Երեխան ծնված օրից բնազդորեն վախենում է երեք բանից՝ բարձր աղմուկից, ընկնելուց եւ լույսի բացակայությունից։ Ահա թե ինչու շատ սրամիտ են համարում, երբ մարդուն հանկարծակի վախեցնում են ուժգին զոռոցով։ Ահա թե ինչու են սիրում օվկիանոսի մակընթացության ժամանակ սահել տախտակներով։ Եվ ահա թե ինչու «Խորհրդավոր թունելը» մեծ փողեր էր բերում։ Մարդիկ դուրս էին գալիս Խավարից դողալով, շնչահեղձ, վախից կիսամեռ, բայց շարունակում էին փող տալ, որ նորից ընկնեն թունել։

— Սպասեք մի րոպե, կարծես, հիշեցի։ Մի քանի մարդ մահացել էին թունելում։ Այդ մասին լուրեր էին պտտվում թունելը փակելուց հետո։

— Մահացան երկուերեք հոգի,— արհամարհանքով ասաց հոգեբանը։— Դա դեռ ոչինչ։ Թունելի տերերը հանգուցյալների ընտանիքներին փոխհատուցման գումար տվեցին եւ Ջոնգլորի քաղաքապետարանին համոզեցին կատարվածը անուշադրության մատնել։ Ի վերջո, եթե հիվանդ սիրտ ունեցող մարդկանց խելքին փչել է զբոսնել թունելում, ապա դա նրանց գործն է, իսկ հետագայում այդպիսի բան այլեւս չի կրկնվի։ Դրանից հետո տոմսարկղի սրահում միշտ բժիշկ էր լինում, որը զննում էր յուրաքանչյուր ուղեւորին գնացք նստելուց առաջ։ Դրանից հետո տոմսերի համար էլ ավելի շատ էին գլուխ ջարդում։

— Իսկ ի՞նչ եզրակացության եք եկել։

— Դեհ, բանը դրանով չվերջացավ։ Թունելում եղածներից ոմանք իրենց հիանալի էին զգում, բայց հետագայում հրաժարվում էին մտնել փակ շինություններ՝ լինի դա պալատ, առանձնատուն, բնակելի շենք, խրճիթ, հյուղակ։

Տերեմոնը բացականչեց զզվանքով.

— Ուզում եք ասել, որ նրանք հրաժարվո՞ւմ էին հեռանալ փողոցից։ Իսկ որտե՞ղ էին քնում նրանք։

— Փողոցում։

— Բայց նրանց պետք է ստիպեին՝ գնալ իրենց տները։

— Օ, ստիպում էին։ Եվ այդ մարդկանց մոտ սոսկալի հիստերիկա էր սկսվում, նրանք ամբողջ ուժով ճգնում էին գլուխները խփել մոտակա պատին։ Շինության ներսում նրանց կարելի էր պահել միայն զսպաշապիկի եւ մորֆիի օգնությամբ։

— Պարզապես ինչոր խելագարներ են եղել։

— Ճիշտ այդպես։ Թունելում եղածներից յուրաքանչյուր տասներորդը այնտեղից դուրս էր գալիս խելագար։ Իշխանությունները դիմեցին հոգեբաններին, եւ մենք արեցինք միակ հնարավոր բանը։ Փակեցինք այդ ատրակցիոնը։

Շիրինը լայն տարածեց ձեռքերը։

— Իսկ ի՞նչ էր կատարվում այդ մարդկանց հետ,— հարցրեց Տերեմոնը։

— Մոտավորապես այն, ինչ ձեզ հետ, երբ կարծեցիք, թե մթության մեջ պատերը շարժվում են ձեզ վրա։ Հոգեբանության մեջ կա հատուկ տերմին, որը արտահայտում է մարդու բնազդային վախը լույսի բացակայությունից։ Մենք այդ վախն անվանում ենք կլաուստրոֆոբիա, որովհետեւ լույսի բացակայությունը միշտ կապված է փակ շինության հետ եւ մեկից վախենալ՝ նշանակում է վախենալ նաեւ մյուսից։ Հասկանո՞ւմ եք։

— Եվ թունելում եղած մարդի՞կ…

— Եվ թունելում եղած մարդիկ պատկանում էին այդ դժբախտների թվին, որոնց հոգեկան աշխարհը չէր կարողացել դիմադրել կլաուստրոֆոբիային, որ տիրում է նրանց խավարի մեջ։ Տասնհինգ րոպե առանց լույսի՝ դա շատ է. դուք առանց լույսի նստեցիք ընդամենը երկուերեք րոպե եւ, եթե չեմ սխալվում, հասցրիք կորցնել հոգեկան հավասարակշռությունը։ Այդ մարդիկ հիվանդանում էին այսպես կոչված «կայուն կլաուստրոֆոբիայով»։ Խավարի եւ փակ շինությունների նկատմամբ նրանց թաքնված վախը ի հայտ էր գալիս, ակտիվանում էր եւ, որքանով կարող ենք դատել, դառնում էր մշտական։ Ահա թե ինչի կարող է հասցնել մթության մեջ տասնհինգ րոպե մնալը։

•

Երկար լռություն տիրեց։ Տերեմոնը մռայլվեց։

— Ես չեմ հավատում, որ դրությունն այդքան վատ է։

— Դուք կամենում եք ասել, որ չեք ուզում հավատալ,— նրա խոսքը կտրեց Շիրինը։— Դուք վախենում եք հավատալ։ Նայեք պատուհանին։

Տերեմոնը նայեց պատուհանին, իսկ հոգեբանը շարունակեց.

— Պատկերացրեք, որ ամենուրեք խավար է։ Եվ ոչ մի տեղ լույս չի երեւում։ Տները, ծառերը, դաշտերը, գետինը, երկինքը համատարած սեւ են եւ, ավելին, գուցեեւ Աստղերը… ինչպիսին էլ որ նրանք լինեն։ Դուք կարո՞ղ եք պատկերացնել այս ամենը։

— Այո, կարող եմ,— բարկացած հայտարարեց Տերեմոնը։

Շիրինը անսպասելի զայրույթով բռունցքը խփեց սեղանին։

— Դուք ստո՛ւմ եք։ Դուք չեք կարող դա պատկերացնել։ Ձեր ուղեղն այնպես է կառուցված, որ այդ հասկացությունը այնտեղ չի տեղավորվում, ինչպես չի տեղավորվում անսահմանության կամ հավիտենականության հասկացությունը։ Դուք միայն խոսել կարող եք այդ մասին։ Խավարի ամենափոքր չափն արդեն ընկճում է ձեզ, եւ երբ նա իսկապես կգա, ձեր ուղեղը կբախվի մի այնպիսի երեւույթի հետ, որն անկարող կլինի ըմբռնել։ Եվ դուք կխելագարվեք լրիվ ու ընդմիշտ։ Դա կասկածից վեր է։

Եվ նա տխուր ավելացրեց.

— Ու դարձյալ երկու հազարամյակների հուսահատ պայքարը ապարդյուն կլինի։ Վաղն ամբողջ Լազաշում չի մնա եւ ոչ մի կանգուն քաղաք։

Տերեմոնը մի քիչ հանգստացավ։

— Ինչո՞ւ եք այդպես կարծում։ Ես դարձյալ չեմ հասկանում, թե ինչու պիտի խելագարվեմ միայն այն պատճառով, որ երկնքում արեւ չկա։ Եվ եթե դա կատարվի ինձ ու մյուս բոլոր մարդկանց հետ, ապա քաղաքները ինչո՞ւ պիտի կործանվեն։ Մե՞նք կպայթեցնենք դրանք, հա՞։

Բայց Շիրինը զայրացած էր եւ կատակելու ոչ մի ցանկություն չուներ։

— Գտնվելով Խավարի մեջ, դուք ի՞նչ կցանկանայիք ամենից շատ։ Ի՞նչ կպահանջեին ձեր բնազդները։ Լո՛ւյս, գրողը տանի, լո՛ւյս։

— Հետո՞։

— Իսկ ինչպե՞ս պիտի լույս ճարեք։

— Չգիտեմ,— խոստովանեց Տերեմոնը։

— Լույս ստանալու միակ միջոցը ո՞րն է, եթե նկատի չունենանք արեւը։

— Որտեղի՞ց իմանամ։

Նրանք կանգնած էին դեմդիմաց։

— Դուք կվառեք մի որեւէ բան, հարգելիս,— ասաց Շիրինը։— Դուք երբեւիցե տեսած կա՞ք, թե ինչպես է այրվում անտառը։ Երբեւիցե ճանապարհվե՞լ եք հեռավոր զբոսանքի եւ խարույկի վրա ճաշ եփել։ Իսկ չէ՞ որ այրվող փայտը միայն տաքություն չի տալիս։ Տալիս է նաեւ լույս, եւ մարդիկ գիտեն դա։ Իսկ երբ մութ է, նրանց լույս է հարկավոր, եւ մարդիկ լույս են փնտրում։

— Եվ դրա համար փա՞յտ են վառում։

— Դրա համար վառում են ինչ ընկնում է ձեռքերը։ Նրանց լույս է պետք։ Նրանք պետք է մի բան վառեն, եւ եթե փայտ չեն գտնում, վառում են ինչոր պատահի։ Միայն թե լույս լինի… Եվ բոլոր բնակելի կենտրոնները կործանվում են հրդեհներից։

Նրանք անթարթ նայում էին իրար. թվում էր, մրցում էին, թե ում կամքն է ավելի ուժեղ, եւ ի վերջո Տերեմոնը լուռ իջեցրեց հայացքը։ Նա շնչում էր խռպոտ, ընդհատուն, ու հազիվ թե լսեց հարեւան սենյակից եկող աղմուկն ու խոսակցության ձայները։

— Կարծեմ, դա Յիմոտի ձայնն է,— ասաց Շիրինը, աշխատելով հանգիստ երեւալ։— Հավանաբար, նա ու Ֆարոն եկել են արդեն։ Գնանք տեսնենք ինչու են ուշացել։

— Լավ,— մրմնջաց Տերեմոնը։ Նա խոր շունչ քաշեց եւ կարծես սթափվեց։

Լարվածությունը չքացավ։

Հարեւան սենյակում աղմուկ էր։ Գիտնականները թափվել էին երկու երիտասարդների գլխին, որոնք հանում էին վերարկուները եւ միաժամանակ աշխատում էին պատասխանել կարկուտի պես իրենց վրա տեղացող հարցերին։

Ատոնը, մի կողմ հրելով մյուսներին, մոտեցավ նրանց ու խիստ հարցրեց.

— Դուք հասկանո՞ւմ եք, որ կես ժամից էլ քիչ է մնացել։ Որտե՞ղ էիք։

Ֆարո 24ը նստեց եւ սկսեց շփել ձեռքերը։ Նրա դեմքը կարմրել էր ցրտից։

— Յիմոտն ու ես հենց նոր վերջացրինք մի խելահեղ փորձ, որ ձեռնարկել էինք մեր պատասխանատվությամբ։ Մենք ստեղծեցինք մի սարք, որը կնմանակեր Խավարի ու Աստղերի հայտնվելը, ու մենք նախապես պատկերացում կկազմեինք, թե այդ ամենն ինչպես է լինելու։

Այս խոսքերը աշխուժացրին բոլորին, իսկ Ատոնի հայացքում հանկարծ հետաքրքրություն հայտնվեց։

— Դուք այդ մասին առաջ ոչինչ չէիք ասում։ Դե, իսկ ի՞նչ եք արել։

— Ես ու Յիմոնը վաղուց էինք այդ մասին մտածում,— ասաց Ֆարոն,— ու պատրաստում էինք մեր փորձը, բայց ոչինչ չստացվեց…

— Իսկ ի՞նչ տեղի ունեցավ։

Այս անգամ պատասխանեց Յիմոտը։

— Մենք փակվեցինք այնտեղ եւ մեր աչքերին հնարավորություն տվինք վարժվելու մթությանը։ Դա սոսկալի զգացողություն է, լրիվ Խավարում քեզ թվում է, թե պատերն ու առաստաղը փլվում են վրադ։ Բայց մենք հաղթահարեցինք այդ զգացումը եւ գործի դրեցինք մեր մեքենան։ Կափարիչները ետ գնացին եւ ողջ առաստաղով մեկ փայլկլտացին լույսի ցոլքերը…

— Հետո՞։

— Հետո՞… ոչինչ։ Այ թե ինչն է ամենացավալին։ Ոչինչ տեղի չունեցավ։ Պարզապես դա մի բազմաթիվ անցքերով տանիք էր, եւ մենք հենց այդպես էլ ընկալեցինք։ Մենք

նորից ու նորից կրկնեցինք փորձը… դրա համար էլ ուշացանք… բայց ոչ մի ուրիշ արդյունք չեղավ։

Լսածից ցնցված՝ բոլորը լուռ շրջվեցին Շիրինի կողմը, որը բերանը բաց լսում էր, ասես քարացել էր։

Առաջինը խոսեց Տերեմոնը։

— Շիրին, դուք հասկանո՞ւմ եք, թե սա ինչպիսի հարված է հասցնում ձեր տեսությանը,— թեթեւացած ժպտալով, ասաց նա։

Սակայն Շիրինը անհամբեր բարձրացրեց ձեռքերը։

— Ոչ, սպասեք։ Թողեք մտածեմ։— Նա չրխկացրեց մատները, վեր բարձրացրեց գլուխը, եւ նրա աչքերում արդեն չկար անվստահության կամ զարմանքի արտահայտություն։— Իհարկե…

Բայց նա խոսքը չվերջացրեց։ Վերեւում լսվեց ջարդվող ապակու զնգոց, եւ Բինին, փնթփնթալով՝ «Սա՞ որ սատանան է», աստիճաններով վեր նետվեց։

Մյուսները հետեւեցին նրան։

Այնուհետեւ ամեն ինչ շատ արագ կատարվեց։ Հայտնվելով գմբեթում, Բինին սարսափահար տեսավ ջարդված լուսանկարչական թիթեղները եւ դրանց վրա կռացած մարդուն։ Կատաղած նետվելով անկոչ հյուրի վրա, աքցանի պես կառչեց նրա կոկորդից։ Նրանք գլորվեցին հատակին, եւ հենց այդ պահին վազելով գմբեթ մտան աստղադիտարանի մյուս աշխատակիցները, եւ անծանոթը բառացիորեն թաղվեց իր վրա թափված տասնյակ կատաղած մարդկանց տակ։

Վերջինը գմբեթ բարձրացավ շնչակտուր Ատոնը։

— Բաց թողեք նրան,— ասաց ծերուկը։

Բոլորը դժկամությամբ ետ քաշվեցին եւ անծանոթին ոտքի կանգնեցրին։ Նա շնչում էր խռպոտած, ճակատն ամբողջովին կապտած էր, իսկ հագուստը՝ պատռված։ Նրա կարմրահեր մորուքը խնամքով զանգրացված էր՝ Պաշտամունքի պահապանների մոտ ընդունված ձեւով։

Բինին բռնեց նրա օձիքից եւ մոլեգնած թափ տվեց.

— Ի՞նչ էիր մտադիր անել, սրիկա՛։ Այդ թիթեղները…

— Ես դրանց համար չէի եկել այստեղ,— սառը պատասխանեց Պաշտամունքի պահապանը։— Դա պատահաբար եղավ։

Բինին տեսավ, թե որ կողմ է ուղղված նրա չարամիտ հայածքը, եւ մռնչաց.

— Հասկանալի է։ Քեզ հետաքրքրում էին լուսանկարչական ապարատները։ Բախտդ բերեց, որ վայր գցեցիր թիթեղները։ Եթե կպած լինեիր «Վայրկենական Բերտային» կամ մի որեւէ ուրիշ խցիկի, տեղնուտեղը շունչդ կփչեիր, իսկ հիմա…

Ու նա վեր բարձրացրեց բռունցքը, բայց Ատոնը բռնեց նրա ձեռքը։

— Վե՛րջ տվեք։ Բա՛ց թողեք նրան,— կարգադրեց նա։

Երիտասարդ ինժեները տատանվեց եւ դժկամորեն ցած իջեցրեց ձեռքը։ Ատոնը մի կողմ հրեց նրան ու կանգնեց անկոչ հյուրի առջեւ։

— Ձեր անունը Լատիմեր է, չէ՞։

Պաշտամունքի պահապանը թեթեւակիորեն խոնարհվեց ու ցույց տվեց ազդրի վրայի խորհրդանիշը։

— Ես Լատիմեր 25ն եմ, նորին սրբազանություն Սոր 5ի երրորդ կարգի օգնականը։

Ատոնի ճերմակ հոնքերը սողացին դեպի վեր։

— Եվ դուք այստե՞ղ էիք նորին սրբազանության հետ, երբ անցյալ շաբաթ նա այցելեց ինձ։

Լատիմերը խոնարհվեց երկրորդ անգամ։

— Իսկ ի՞նչ եք ուզում։

— Այն, ինչ դուք չեք տա հոժարակամ։

— Երեւի ձեզ Սոր 5ն է ուղարկել… Թե՞ սա ձեր սեփական նախաձեռնությունն է։

— Ես այդ հարցին չեմ պատասխանի։

— Մենք էլի՞ այցելուների պիտի սպասենք։

— Այդ հարցին եւս չեմ պատասխանի։

Ատոնը նայեց իր ժամացույցին եւ մռայլվեց։

— Ձեր տերն ի՞նչ է ուզում ինձնից։ Իմ պարտավորությունները ես կատարել եմ։

Լատիմերը հազիվ նկատելի ժպտաց, բայց ոչինչ չպատասխանեց։

— Ես նրան խնդրեցի,— զայրացած շարունակեց Ատոնը,— հաղորդել ինձ այն տեղեկությունները, որոնք հայտնի են միայն Պաշտամունքին, ու այդ տեղեկությունները ես ստացա։ Դրա համար շնորհակալ եմ։ Իմ հերթին, խոստացա ապացուցել, որ Պաշտամունքի դոգման ըստ էության ճշմարիտ է։

— Դա ապացուցելու կարիք չկա,— հպարտորեն առարկեց Լատիմերը։— Հայտնությունների գիրքը պարունակում է բոլոր անհրաժեշտ ապացույցները։

— Այո։ Մի բուռ հավատացյալների համար։ Մի՛ ձեւացրեք, իբր դուք ինձ չեք հասկանում։ Ես ձեզ առաջարկեցի գիտականորեն հիմնավորել ձեր հավատալիքները։ Ու ես դա արեցի՛։

Պաշտամունքի պահապանի աչքերը չարախնդորեն նեղացան։

— Այո, դուք արեցիք դա… բայց աղվեսային խորամանկությամբ, քանզի ձեր մեկնաբանումները, իբր հաստատելով մեր հավատալիքները, միաժամանակ վերացնում էին դրանց իսկ անհրաժեշտությունը։ Դուք Խավարը եւ Աստղերը վերածեցիք բնության երեւույթների, ու նրանք զրկվեցին իրենց իսկական խորհուրդից։ Դա սրբապղծություն է։

— Այդ դեպքում դա իմ մեղքը չէ։ Գոյություն ունեն օբյեկտիվ փաստեր։ Եվ ես սոսկ հաստատում եմ դրանք։

— Ձեր «փաստերը» մոլորություն են եւ խաբեություն։

Ատոնը բարկությամբ ոտքը զարկեց հատակին։

— Դուք որտեղի՞ց գիտեք։

— Գիտեմ,— հետեւեց կույր հավատով լի պատասխանը։

Ռեկտորը կապկարմիր կտրեց, ու Բինին ինչոր բան համառորեն շշնջաց նրա ականջին։ Սակայն Ատոնը ձեռքի շարժումով պահանջեց, որ նա լռի։

— Եվ ի՞նչ է ուզում մեզնից Սոր 5ը։ Երեւի, նա շարունակում է մտածել, թե փորձելով աշխարհին համոզել, որ միջոցներ ձեռնարկեն խելահեղության սպառնալիքի դեմ, մենք դրանով իսկ խանգարում ենք բազում հոգիների փրկությանը։ Եթե դա այդչափ կարեւոր է նրա համար, ապա թող իմանա, որ դա մեզ չհաջողվեց անել։

— Փորձն իսկ բավական մեծ վնաս հասցրեց, եւ անպայման պետք է խանգարել ձեզ, որ դուք սրբապղծորեն չփորձեք տեղեկություններ ստանալ ձեր այդ դիվային սարքերի օգնությամբ։ Մենք կատարում ենք կամքը Աստղերի, եւ ես ցավում եմ, որ սեփական անշնորհքությանս պատճառով չհասցրեցի ջարդուփշուր անել ձեր անիծյալ սարքերը։

— Դա ձեզ շատ քիչ բան կտար,— առարկեց Ատոնը։— Մեր հավաքած բոլոր տվյալները, բացի նրանցից, որ կստանանք այսօր անմիջապես դիտումների միջոցով, արդեն հուսալիորեն պահված են, եւ դրանք վերացնելն անհնար է։— Նա մռայլ ժպտաց։— Բայց դա չի փոխում այն փաստը, որ դուք այստեղ եք թափանցել որպես գող, որպես հանցագործ։— Նա դարձավ իր ետեւում կանգնած մարդկանց.— Սարոյից ոստիկաններ կանչեք։

•

— Գրողը տանի, Ատոն,— դեմքը կնճռոտելով բացականչեց Շիրինը։— Ի՞նչ եք ասում։ Մենք դրա ժամանակը չունենք։— Արագարագ մի կողմ հրելով մյուսներին, նա առաջ եկավ։— Ես ինձ վրա եմ վերցնում սրան հսկելը։

Ատոնը զոռոզամտորեն նայեց հոգեբանին։

— Մենք ձեր խաղերի ժամանակը չունենք, Շիրին։ Բարի եղեք չմիջամտել իմ կարգադրություններին։ Դուք այստեղ միանգամայն կողմնակի մարդ եք, մի՛ մոռացեք դա։

Շիրինը արտահայտիչ ծռմռեց շրթունքները։

— Ինչ հարկ կա հիմա ոստիկանություն կանչելու այստեղ, երբ մինչեւ Բետայի խավարումը մնացել են հաշվված րոպեներ, իսկ այս երիտասարդը պատրաստ է ազնիվ խոսք տալ, որ չի հեռանա այստեղից եւ կաշխատի հանգիստ պահել իրեն։

— Ես ոչ մի խոսք չեմ տա,— անմիջապես հայտարարեց Լատիմերը։— Արեք, ինչ ուզում եք, բայց ես անկեղծորեն զգուշացնում եմ ձեզ. հենց որ հնարավորություն ունենամ՝ կանեմ այն, ինչի համար հայտնվել եմ այստեղ։ Եթե դուք ապավինում եք իմ ազնիվ խոսքին, ապա կարող եք ոստիկանություն կանչել։

— Դուք վճռական մարդ եք,— բարեկամաբար ժպտաց Շիրինը։— Լավ, ես ձեզ որոշ բաներ կբացատրեմ։ Տեսնո՞ւմ եք պատուհանի մոտ կանգնած երիտասարդին։ Նա շատ ուժեղ է եւ լավ է բանեցնում բռունցքները, բացի այդ, նա կողմնակի մարդ է այստեղ։ Երբ խավարումը սկսվի, նա այստեղ անելիք չի ունենա, բացի ձեզ հետեւելուց։ Դե ես ինքս էլ, թեեւ մի քիչ… հաստլիկ եմ տուրուդմփոցի համար, բայց կկարողանամ օգնել նրան։

— Հետո ի՞նչ,— սառը հարց տվեց Լատիմերը։

— Լսեք ինձ ու ամեն ինչ կիմանաք,— պատասխանեց Շիրինը։— Հենց որ խավարումը սկսվի, ես ու Տերեմոնը ձեզ կնստեցնենք առանց պատուհանի մի խցում եւ դուռն էլ ամուր կփակենք կողպեքով։ Եվ դուք այնտեղ կմնաք, մինչեւ որ ամեն ինչ կվերջանա։

— Իսկ հետո,— ծանր շունչ քաշելով ասաց Լատիմերը,— ոչ մեկ չի լինի, որ ինձ դուրս հանի այնտեղից։ Ես ձեզնից պակաս չգիտեմ, թե ինչ է նշանակում Աստղերի հայտնվելը… նույնիսկ շատ ավելի լավ գիտեմ։ Դուք բոլորդ կքխելագարվեք, եւ ինձ ոչ ոք չի ազատի։ Դուք ինձ առաջարկում եք խեղդամահ լինել կամ էլ սովամահ։ Ուրիշ ի՞նչ կարելի է սպասել գիտնականներից։ Բայց ես ոչ մի խոստում չեմ տա։ Սա սկզբունքի հարց է, եւ այլեւս մտադիր չեմ խոսել այդ մասին։

Ատոնը, ըստ երեւույթին, շփոթվեց։ Նրա խամրած աչքերում տագնապ էր արտահայտվում։

— Իսկապես, Շիրին, նրան փակելը…

Շիրինը ձեռքերը թափահարեց նրա վրա։

— Սպասեք։ Ես բնավ չեմ մտածում, որ բանը այդքան հեռու կգնա։ Լատիմերը փորձեց (բավական հմտորեն) խաբել մեզ, բայց ես հոգեբան եմ ոչ միայն այն բանի համար, որ ինձ դուր է գալիս այդ բառի հնչեղությունը,— նա ժպտաց Պաշտամունքի պահապանին։— Մի՞թե կարծում եք, թե ես ընդունակ եմ դիմելու նման պարզունակ սպառնալիքի, ինչպիսին է սովամահությունը։ Սիրելի Լատիմեր, եթե ես ձեզ փակեմ խցիկում, ապա դուք չեք տեսնի Խավարը, չեք տեսնի Աստղերը։ Պաշտամունքի դրույթների հետ նույնիսկ ամենամակերեսային ծանոթությունը բավական է, որպեսզի հասկանաք, որ եթե ձեզ փակենք Աստղերի հայտնվելու ժամանակ, ապա ձեր հոգին

կզրկենք անմահությունից։ Այսպես ուրեմն, ես ձեզ կարգին մարդ եմ համարում ու կհավատամ, եթե ազնվորեն խոստանաք մեզ խանգարելու ոչ մի փորձ չանել։

Լատիմերի քունքի երակը ցնցվեց, եւ նա, ամբողջովին կծկվելով, խռպոտ ասաց.

— Խոսք եմ տալիս։— Այնուհետեւ ցասկոտ ավելացրեց։— Բայց ինձ մխիթարում է այն, որ դուք բոլորդ կնզովվեք ձեր այսօրվա արածների համար։

Նա կտրուկ շրջվեց եւ քայլեց դռան մոտ դրված բարձր աթոռի կողմը։

Շիրինը գլխով արեց ժուռնալիստին եւ ասաց.

— Նրա կողքը նստեք, Տերեմոն… Այդպես, ձեւականության համար։ Հե՛յ, Տերեմոն։

Բայց ժուռնալիստը տեղից չշարժվեց։ Նա քաթանի գույն էր ստացել։

— Նայեք։

Դեպի երկինք ուղղված նրա մատը դողում էր, իսկ ձայնը հնչում էր խռպոտ ու բեկբեկուն։

Նրանք նայեցին առաջ պարզված մատի ուղղությամբ եւ մի հառաչ արձակեցին։ Բոլորը մի քանի վայրկյան շունչները պահած նայում էին երկնքին։

Բետայի եզրը անհետացավ։

Դեպի արեւը սողացող սեւ ծվենը հազիվ մի եղունգի չափ լիներ, բայց նրան նայող մարդկանց թվում էր ճակատագրի ստվեր։

Բոլորը միայն մի ակնթարթ անշարժ կանգնած մնացին, իսկ հետո սկսվեց իրարանցումը։ Այն դադարեց էլ ավելի արագ եւ փոխարինվեց հստակ ու տենդագին աշխատանքով։ Ամեն մեկն զբաղվեց իր գործով։ Այս օրհասական պահին անձնական զգացմունքները վերացել էին։ Այժմ նրանք գիտնականներ էին՝ կլանված իրենց աշխատանքով։ Նույնիսկ Ատոնը արդեն չէր նկատում, թե շուրջն ինչ է տեղի ունենում։

— Խավարումը սկսվել է, երեւի, մի տասնհինգ րոպե առաջ,— գործնական տեսքով ասաց Շիրինը։— Մի քիչ շուտ է, բայց բավական ճշգրիտ, եթե նկատի ունենանք հաշվարկների մոտավորությունը։

Նա նայեց շուրջը, ոտնաթաթերի վրա մոտեցավ Տերեմոնին, որը դարձյալ պատուհանից դուրս էր նայում, եւ կամաց քաշեց նրա թեւից։

— Ատոնը կատաղած է,— շշնջաց։— Նրանից հեռու մնացեք։ Նա բաց թողեց սկիզբը Լատիմերի պատճառով։ Ես եթե հիմա նրա ձեռքն ընկնեք, կհրամայի պատուհանից դուրս նետել ձեզ։

Տերեմոնը գլխով արեց եւ նստեց։ Շիրինը զարմացած նայեց նրան։

— Գրողը տանի, դուք դողում եք,— գոչեց նա։

— Հը՞։— Տերեմոնը լիզեց չորացած շրթունքները եւ փորձեց ժպտալ։— Ես, իրոք, այնքան էլ լավ չեմ զգում ինձ։

Հոգեբանը կկոցեց աչքերը։

— Մի քիչ վախեցաք, հա՞։

— Ոչ,— զայրացած գոռաց Տերեմոնը։— Թողեք ուշքի գամ։ Հոգուս խորքում ես չէի հավատում այս ցնդաբանությանը… մինչեւ վերջին րոպեն։ Ինձ ժամանակ տվեք այդ մտքին համակերպվելու համար։ Չէ որ դուք նախապատրաստվում էիք երկու ամսից ավելի։

— Դուք ճիշտ եք,— մտախոհ ասաց Շիրինը։— Լսեք։ Դուք ժամանակ ունեք այնտեղ հասնելու համար։ Նրանց մոտ ազատվել է մի տեղ, որովհետեւ ես հեռացել եմ այտեղից։ Վերջիվերջո դուք այստեղ պետք չեք, իսկ այնտեղ կարող եք շատ պիտանի լինել…

Տերեմոնը հոգնած նայեց Շիրինին։

— Դուք կարծում եք, ծնկներս դողո՞ւմ են։ Դեհ, լսեք։ Ես լրագրող եմ, ու ինձ հանձնարարել են հոդված գրել։ Եվ ես կգրեմ։

Հոգեբանը հազիվ նկատելի ժպտաց։

— Ես հասկանում եմ ձեզ։ Պրոֆեսիոնալ պատիվը, այո՞։

— Կարող եք եւ այդպես համարել։ Բայց ես հիմա աջ ձեռքս կտայի մի ուրիշ խմիչքի համար, եթե նույնիսկ այն կիսով չափ քիչ լինի նրանից, որ դուք լակեցիք։ Երբեք այսպես խմելու ցանկություն չեմ ունեցել…

Նա հանկարծ լռեց, քանի որ Շիրինը արմունկով հրեց նրան։

— Դուք լսո՞ւմ եք։ Լսեք։

Տերեմոնը նայեց Շիրինի ցույց տված կողմը եւ տեսավ Պաշտամունքի պահապանին, որը աշխարհում ամեն ինչ մոռացած, դեմքով կանգնել էր դեպի պատուհանը եւ ինքնամոռաց ինչոր բան էր փնթփնթում։

— Նա ի՞նչ է ասում,— շշնջաց ժուռնալիստը։

— Նա կարդում է Հայտնությունների գիրքը, հինգերորդ գլուխը,— պատասխանեց Շիրինը եւ բարկացած ավելացրեց.— Լռեք եւ լսեք։

«Եվ պատահեց այնպես, որ Բետա արեգակը այդ օրերին ավելի ու ավելի շատ էր երկնքում մնում, իսկ հետո վրա հասավ այն ժամը, երբ, փոքրիկ ու սառը, միայն նա էր փայլում Լազաշի վերեւում։

Եվ հավաքվում էին մարդիկ փողոցներում ու հրապարակներում, ու զարմանում էին մարդիկ իրենց տեսածից, քանզի հոգին նրանց մռայլված էր։ Նրանց սրտերը ընկճված էին, խոսքը՝ անկապ, եւ հոգիները մարդկանց սպասում էին Աստղերի հայտնվելուն։

Եվ Տրիգոն քաղաքում ճիշտ կեսօրին դուրս եկավ Վենդրետ IIը, եւ ասաց նա Տրիգոնի մարդկանց. «Ուշ դարձրեք, մեղավորներ։ Դուք արհամարհում եք ճշմարիտ ճանապարհները, բայց եկել է հատուցման ժամը։ Արդեն գալիս է Անձավը, որ կուլ տա Լագաշին եւ այն ամենը, ինչ կա նրա վրա»։

Նա դեռ չէր ասել իր խոսքը, իսկ Անձավի Խավարն արդեն ծածկել էր Բետայի եզրը եւ քողարկել նրան Լագաշից։ Մարդիկ բարձր գոռում էին, երբ անհետանում էր լույսը, եւ մեծ էր սոսկումը, որ տիրում էր նրանց հոգիներին։

Եվ եղավ այնպես, որ Անձավի Խավարն ընկավ Լագաշի վրա, եւ լույս չկար համայն Լագաշում։ Եվ մարդիկ դարձան կույրերի նման, ու ոչ ոք չէր տեսնում հարեւանին, թեեւ զգում էր նրա շունչը իր դեմքին։

Եվ այդ պահին հոգիներն անջատվեցին մարդկանցից, իսկ նրանց լքված մարմինները դարձան ասես գազաններ, եւ գոռումգոչունով սուրացին նրանք Լագաշի քաղաքների մթին փողոցներով։

Եվ Աստղերից վայր ընկավ Երկրային հուրը, ու որտեղ որ նա դիպավ Լագաշին, այնտեղ մոխրի վերածվեցին քաղաքները, եւ ոչ մի բան չմնաց ոչ մարդուց, ոչ էլ նրա գործերից։

Եվ այդժամ…»

Ինչոր բան փոխվեց Լատիմերի ձայնի մեջ։ Նա շարունակում էր ակնապիշ նայել պատուհաններին եւ այնուամենայնիվ զգում էր, թե ինչպիսի հետաքրքրությամբ են իրեն լսում Շիրինն ու Տերեմոնը։ Թեթեւակի, առանց շունչ առնելու, նա փոքրինչ փոխեց ձայնի տեմբրը, եւ նրա խոսքը դարձավ էլ ավելի երգեցիկ։

Տերեմոնը նույնիսկ ցնցվեց զարմանքից։ Բառերը գրեթե ծանոթ էին թվում։ Սակայն առոգանությունը աննկատելիորեն փոխվեց, փոխվեց եւ շեշտադրությունը՝ ընդամենը այսքան, բայց այլեւս անհնար էր հասկանալ Լատիմերին։

— Նա անցավ մի որեւէ հին ցիկլի լեզվի,— խորամանկորեն ժպտալով ասաց Շիրինը,— միգուցե առասպելական երկրորդ ցիկլի լեզվին։ Ինչպես գիտեք, հենց այդ լեզվով է սկզբնապես գրված եղել Հայտնությունների գիրքը։

— Ինձ համար այսքանն էլ հերիք է։— Տերեմոնը մի կողմ քաշեց իր աթոռը եւ մազերը հարդարեց մատներով, որոնք այլեւս չէին դողում։— Հիմա ինձ ավելի լավ եմ զգում։

— Մի՞թե,— մի քիչ զարմացած հարցրեց Շիրինը։

— Անկասկած։ Չնայած մի քանի րոպե առաջ իրոք վախեցա։ Ձեր այդ պատմությունները ձգողականության մասին, հետո՝ խավարումի սկսվելը քիչ մնաց ինձ շարքից հանեին։ Բայց սա…— Նա մատն արհամարհանքով տնկեց Պաշտամունքի կարմրամորուս պահապանի կողմը,— սա ես լսել էի դեռ իմ դայակից։

Ամբողջ կյանքումս ծիծաղել եմ այդ հեքիաթների վրա։ Ու հիմա էլ մտադիր չեմ վախենալու։

Նա խոր շունչ քաշեց եւ ջղայն ծաղրանքով ավելացրեց.

— Բայց որպեսզի չկորցնեմ տոկունությունս, ավելի լավ է չնայեմ պատուհանին։

— Հրաշալի է,— ասաց Շիրինը։— Միայն թե ցածր խոսեք։ Ատոնը հենց նոր կտրվեց իր սարքից եւ սպանիչ հայացք նետեց ձեզ վրա։

— Ես մոռացել էի ծերուկի մասին,— ծամածռելով դեմքը՝ ասաց Տերեմոնը։

Նա զգուշորեն աթոռը տարավ մի կողմ, մեջքով նստեց դեպի պատուհանը եւ, զզվանքով նայելով ուսի վրայից, ավելացրեց.

— Ինձ թվում է, որ շատ շատերը պիտի չենթարկվեն այս աստղային խելահեղությանը։

Հոգեբանը միանգամից չպատասխանեց։ Բետան արդեն անցել էր զենիթը, եւ արնակարմիր քառակուսի բիծը, որը հատակի վրա կրկնում էր պատուհանի ուրվագծերը, այժմ սողաց դեպի Շիրինի ծնկները։ Նա մտախոհ նայեց այդ դժգույն կարմրին, հետո կռացավ եւ հայացքն ուղղեց արեւին։

Խավարն արդեն կլանել էր Բետայի երեք քառորդը։ Շիրինը ցնցվեց, եւ, երբ նորից ուղղվեց, նրա վարդագույն դեմքը նկատելիորեն գունատվել էր։ Շփոթությունից ժպտալով՝ նա նույնպես նստեց մեջքով դեպի պատուհանը։

— Հիմա Սարոյում, երեւի, մոտ երկու միլիոն մարդ վերադառնում են Պաշտամունքի գիրկը, որն այժմ ապրում է իր մեծագույն վերածնունդը,— նկատեց Շիրինը։— Մի ամբողջ ժամ Պաշտամունքը կվայելի իր աննախադեպ ծաղկումը,— ավելացրեց նա հեգնորեն։— Կարծում եմ, որ նրա պահապանները այս ժամանակամիջոցում կաշխատեն անել այն, ինչ հնարավոր է։ Ներեցեք խնդրեմ, դուք ինչոր բա՞ն ասացիք։

— Այո։ Պաշտամունքի պահապանները ինչպե՞ս են կարողանում Հայտնությունների գիրքը մի ցիկլից հանձնել մյուսին եւ ընդհանրապես ինչպես՞ս է այն գրվել։ Ուրեմն, գոյություն ունի ինչոր իմունիտետ. եթե բոլորը խելագարվել են, ապա այնուամենայնիվ ո՞վ է գրել այդ գիրքը։

Շիրինը տխուր նայեց Տերեմոնին։

— Էհ, երիտասարդ, չկան ականատեսներ, որոնք կարողանային պատասխանել այդ հարցին, սակայն մենք բավական հստակ ենք պատկերացնում, թե ինչ է տեղի ունեցել։ Այսպես ուրեմն, կան մարդակնց երեք խմբեր, որոնք մյուսների համեմատ ավելի քիչ կտուժեն։ Նախ, դրանք այն սակավաթիվ մարդիկ են, որոնք ընդհանրապես չեն տեսնի Աստղերը. դրանց թվին են պատկանում կույրերը, եւ նրանք, ովքեր խավարումն սկսվելուց առաջ այնպես կհարբեն, որ կսթափվեն միայն ամեն ինչ վերջանալուց հետո։ Դրանց մենք չենք հաշվի, քանի որ նրանք, ըստ էության,

ականատես չեն։ Այնուհետեւ՝ մինչեւ վեց տարեկան երեխաները, որոնց համար ողջ աշխարհը չափազանց նոր է, եւ նրանք չեն վախենա Աստղերից ու Խավարից։ Նրանք պարզապես կծանոթանան առանց այն էլ զարմանալի աշխարհի եւս մեկ տարօրինակ երեւույթի հետ։ Համաձա՞յն եք։

Տերեմոնը անվստահորեն գլխով արեց։

— Թերեւս։

— Եվ վերջապես, բթամիտները, որոնք այնքան բութ են, որ չեն զրկվի իրենց չզարգացած բանականությունից… Օրինակ, աշխատանքից տանջված ծեր գյուղացիները։ Դե, երեխաների մոտ կմնան կցկտուր հիշողություններ, եւ կիսախելագար բթամիտների խճճված, անկապ շաղակրատանքների հետ միասին հենց դրանք էլ ընկած են Հայտնությունների գրքի հիմքում։ Բնականաբար, գրքի առաջին տարբերակը հիմնված է եղել այն մարդկանց վկայությունների վրա, որոնք ամենից քիչ կարող էին պիտանի լինել որպես պատմագիրներ, այսինքն՝ դրանք եղել են մանուկները եւ կիսաապուշները։ Բայց հետագայում, երեւի, բազմաթիվ ցիկլերի ընթացքում այդ գիրքը ամենայն խնամքով խմբագրել են եւ շտկել։

— Դուք կարծում եք,— ասաց Տերեմոնը,— որ նրանք գիրքը փոխանցել են մի ցիկլից մյուսին նո՞ւյն եղանակով, որով մենք ենք այժմ պատրաստվում ձգողականության գաղտնիքը հաղորդեն հաջորդ ցիկլին։

Շիրինը թոթվեց ուսերը։

— Հնարավոր է։ Միեւնույն չէ՞, թե ինչպես են նրանք դա անում։ Ինչոր կերպ կարողանում են անել։ Ես միայն ուզում եմ ասել, որ այդ գիրքը լեփլեցուն է ամեն տեսակ աղավաղումներով, չնայած իր հիմքում ունի իրական փաստեր։ Օրինակ՝ դուք հիշո՞ւմ եք Ֆարոյի եւ Յիմոտի փորձը՝ անցքերով տանիքը, որը չհաջողվեց…

— Այո։

— Իսկ դուք գիտե՞ք, թե ինչու…

Նա խոսքը կիսատ թողեց եւ տագնապահար վեր կացավ աթոռից. նրանց մոտեցավ Ատոնը։ Նրա դեմքին սարսափ էր դրոշմված։

— Ի՞նչ է պատահել,— գրեթե գոռաց Շիրինը։

Ատոնը թեւանցուկ արեց Շիրինին եւ մի կողմ տարավ նրան։

Հոգեբանը զգում էր Ատոնի մատների դողդողալը։

— Կամաց խոսեք,— խռպոտ շշնջաց Ատոնը։— Ես հենց նոր լուր ստացա Ապաստարանից։

— Նրանց վատ բա՞ն է պատահել,— վախեցած հարցրեց Շիրինը։

— Ոչ նրա՛նց,— ասաց Ատոնը, շեշտը դնելով դերանվան վրա։ — Նրանք հենց նոր փակվեցին եւ դուրս կգան միայն վաղը չէ մյուս օրը։ Նրանց ոչ մի բան չի սպառնում։

Բայց քաղաքը, Շիրին, քաղաքում արյունահեղ քաոս է։ Դուք չեք կարող պատկերացնել…

Նա դժվարությամբ էր խոսում։

— Դեհ,— անհամբերությամբ ընդհատեց նրան Շիրինը։— Հետո՛ ինչ։ Էլ ավելի վատ է լինելու։ Ինչո՞ւ եք այդպես դողում։— Ու կասկածանքով նայելով Ատոնին՝ ավելացրեց.— Իսկ դուք ինչպե՞ս եք ձեզ զգում։

Այդ ակնարկից Ատոնի աչքերը զայրալից փայլատակեցին, բայց նույն պահին էլ նրա հայացքը դարձավ տանջալի, տագնապահար։

— Դուք չեք հասկանում, Շիրին։ Պաշտամունքի պահապանները զգոն են։ Նրանք մարդկանց կոչ են անում հարձակվել աստղադիտարանի վրա, խոստանալով նրանց մեղքերի անհապաղ թողություն, խոստանալով հոգիների փրկություն եւ այն ամենը, ինչ հնարավոր է։ Ի՞նչ անենք, Շիրին։

Շիրինը գլուխը կախեց եւ բացակայող հայացքով երկար նայում էր իր կոշիկների քթին։ Մտախոհ բռնելով իր կզակը՝ նա վերջապես բարձրացրեց հայացքը եւ վճռականորեն ասաց.

— Ի՞նչ անենք։ Իսկ ընդհանրապես ի՞նչ կարելի է անել։ Ոչինչ։ Մերոնք գիտե՞ն այդ մասին։

— Իհարկե, ոչ։

— Լավ, մի՛ էլ ասեք նրանց։ Որքա՞ն ժամանակ կա մինչեւ լրիվ խավարումը։

— Մեկ ժամից պակաս։

— Մենք պետք է ռիսկի դիմենք։ Իսկապես վտանգավոր ամբոխ կազմակերպելու համար ժամանակ է պետք, եւ նրանք այնքան էլ շուտ չեն հասնի այստեղ։ Մինչեւ քաղաք հինգ մղոնից ավելի կլինի…

Նա պատուհանից նայեց սարալանջերից դեպի արվարձանների սպիտակ տներն իջնող դաշտերին, նայեց մայրաքաղաքին, որը Բետայի դժգույն ճառագայթների տակ մի աղոտ բիծ էր թվում հորիզոնում։

— Ժամանակ կպահանջվի,— կրկնեց նա, առանց շրջվելու պատուհանից։— Շարունակեք աշխատել եւ աղոթեք, որ լրիվ խավարումը վրա հասնի ավելի շուտ, քան ամբոխը կգա այստեղ։

Այժմ արդեն Բետան երկու կես էր եղել, եւ խավարի ուռուցիկ եզրը խուժում էր երկրորդի, դեռեւս լուսավոր կեսի վրա։ Ասես վիթխարի թարթիչը փակում էր տիեզերական լույսի ակունքը։

Հոգեբանն այլեւս չէր լսում իր շուրջը եռացող աշխատանքի խուլ ձայները եւ զգում էր սոսկ միայն մեռյալ լռություն, որ իջել էր պատուհանից այն կողմ փռված դաշտերի վրա։ Նույնիսկ միջատներն էին լռել, եւ շուրջն ամեն ինչ աղոտացել էր։

Շիրինը ականջի տակ հնչեց ինչոր մեկի ձայնը։ Նա ցնցվեց։

— Ինչոր բա՞ն է պատահել,— հարցրեց Տերեմոնը։

— Ի՞նչ։ Ոչ։ Նստե՛ք։ Մենք խանգարում ենք նրանց։

Նրանք վերադարձան իրենց անկյունը, բայց հոգեբանը որոշ ժամանակ լուռ էր։ Նա մատով ձգեց օձիքը եւ գլուխը թափ տվեց, բայց դրանից ոչ մի թեթեւություն չզգաց։ Հանկարծ նայեց Տերեմոնին։

— Իսկ դուք դժվարությամբ չե՞ք շնչում։

Ժուռնալիստը լայն բացեց աչքերը եւ մի քանի անգամ խոր շունչ քաշեց։

— Ոչ։ Իսկ ի՞նչ է եղել։

— Երեւի ես շատ երկար նայեցի պատուհանից դուրս։ Ու կիսախավարն ազդեց վրաս։ Շնչառության դժվարացումը կլաուստրոֆոբիայի նոպայի առաջին նշաններից մեկն է։

Տերեմոնը եւս մեկ անգամ խոր շունչ քաշեց։

— Ինձ վրա դեռ չի ազդել։ Նայեք, ինչոր մեկը գալիս է։

Նրանց ու պատուհանի միջեւ, փակելով աղոտ լույսը, կանգնեց Բինին, եւ Շիրինը վախեցած նայեց նրան։

— Ա՛, Բինի։

Աստղագետը մի ոտքից հենվեց մյուսին եւ հազիվ ժպտաց։

— Դուք չե՞ք առարկի, եթե ես մի քիչ նստեմ այստեղ, ձեզ հետ։ Իմ խցիկները արդեն պատրաստ են, ու ես անելիք չունեմ մինչեւ լրիվ խավարումը։

Նա լռեց եւ նայեց Լատիմերին, որը դրանից տասնհինգ րոպե առաջ գրպանից հանել էր կաշեկազմ մի փոքրիկ գիրք եւ խորասուզվել ընթերցանության մեջ։

— Այս սրիկան լա՞վ է պահում իրեն։

Շիրինը գլխով արեց։ Ուսերը ուղղելով եւ լարվածությունից խոժոռվելով՝ նա ստիպեց իրեն հանգիստ շնչել։

— Բինի, իսկ դուք հե՞շտ եք շնչում,— հարցրեց նա։

Բինին, իր հերթին, խոր շունչ քաշեց։

— Ինձ չի թվում, որ այստեղ տոթ է։

— Ինձ մոտ կլաուստրոֆոբիա է սկսվում,— մեղավորի նման ասաց Շիրինը։

— Ա՛ա՛ա՛։ Իսկ ես ուրիշ բան եմ զգում։ Ինձ թվում է, թե աչքերիս հետ է ինչոր բան կատարվում։ Ամեն ինչ աղոտ է երեւում… Ու ցուրտ է։

— Այո, հիմա իսկապես ցուրտ է։ Այս մեկն արդեն պատրանք չէ,— ասաց Տերեմոնը։— Ոտքերս այնպես են սառել, ասես սառնարան վագոնի մեջ են եղել։

— Մենք պետք է մի ուրիշ բանի մասին խոսենք,— ընդհատեց նրան Շիրինը։— Ես ձեզ բացատրեցի, չէ, Տերեմոն, թե ինչու Ֆարոյի եւ Յիմոտի փորձը անհաջողությամբ վերջացավ…

— Դուք նոր էիք սկսել,— արձագանքեց Տերեմոնը։ Ձեռքերով գրկելով ծունկը՝ նա կզակը հենեց ոտքին։

— Դե, ուրեմն, լսեք, նրանք շատ բառացիորեն էին մեկնաբանում Հայտնությունների գիրքը։ Հավանաբար, Աստղերը բնավ էլ չպետք է համարել ֆիզիկական ֆենոմեն։ Բանն այն է, որ լրիվ Խավարը, հնարավոր է, ուղեղին ստիպում է լույս արարել։ Հավանաբար, Աստղերն էլ հենց այդ լույսի պատրանքն են։

— Այլ կերպ ասած, Աստղերը, ձեր կարծիքով, խելագարության արգասիքն են, այլ ոչ թե պատճառը,— ավելացրեց Տերեմոնը։— Այդ դեպքում էլ ինչո՞ւ է Բինին լուսանկարում երկինքը։

— Թեկուզեւ այն բանի համար, որպեսզի ապացուցի Աստղերի պատրանք լինելը։ Կամ էլ որպեսզի հակառակը ապացուցի, չէ որ ես հաստատապես ոչ մի բան չեմ պնդում։ Կամ էլ, վերջապես…

Բայց նրան ընդհատեց Բինին, որն իր աթոռը մոտեցրել էր նրանց։

— Ես ուրախ եմ, որ դուք խոսեցիք այդ մասին,— աշխուժորեն ասաց նա, կկոցելով աչքերը եւ մատը վեր բարձրացնելով։— Ես մտածում էի այդ Աստղերի մասին ու հանգել եմ բավական հետաքրքիր եզրակացությունների։ Իհարկե, այդ բոլորը ավազի վրա է կառուցված, բայց դրա մեջ, ըստ իս, ինչոր հետաքրքիր բան կա… Ուզո՞ւմ եք լսել։

Բինին, երեւի, իսկույն էլ զղջաց իր ասածի համար, բայց Շիրինը, ետ ընկնելով աթոռի թիկնակին, խնդրեց.

— Խոսեք։ Ես լսում եմ։

— Այսպես ուրեմն. ենթադրենք, որ տիեզերքում ուրիշ արեւներ էլ կան,— շփոթված ասաց Բինին,— այսինքն՝ այնպիսի արեւներ, որոնք մեզնից շատ հեռու են ու այդ պատճառով էլ գրեթե անտեսանելի։ Երեւի ձեզ կթվա, որ ես գիտաֆանտաստիկ գրքեր շատ եմ կարդացել…

— Ինչո՞ւ։ Մի՞թե նման հնարավորությունը չի հերքվում այն փաստով, որ ձգողականության օրենքի համաձայն նրանց գոյության մասին պիտի վկայեր հենց նրանց ձգողականությունը։

— Դա չի դրսեւորվի, եթե այդ արեւները բավականաչափ հեռու են,— պատասխանեց Բինին,— գոնե մեզանից մի չորս հարյուր լուսային տարի կամ ավելի շատ հեռավորության վրա են… Մենք չենք կարող նկատել այդպիսի բռնկումները, որովհետեւ դրանք շատ փոքր են։ Ենթադրենք, թե մեզանից այդքան հեռավորության վրա կան շատ արեւներ… Մեկ կամ նույնիսկ երկու տասնյակ…

Տերեմոնը երկարուձիգ սուլեց։

— Ի՜նչ հոդված կարելի էր սարքել դրանից կիրակնօրյա հավելվածի համար։ Երկու տասնյակ արեւ Տիեզերքում՝ իրարից ութ լուսային տարի հեռավորության վրա։ Հա՜մա՜ թե բան է։ Այդպիսով, մեր Տիեզերքը վեր է ածվում փոշեհատիկի։ Ընթերցողները ա՜յ թե կուրախանան։

— Դա չէ որ սոսկ ենթադրություն է,— ժպտաց Բինին,— իսկ դրանից բխող եզրակացությունը այսպիսին է. խավարման ժամանակ այդ երկու տասնյակ արեւները կլինեն տեսանելի, կանհետանա այն արեգակնային լույսը, որի փայլի մեջ նրանք չէին երեւում։ Քանի որ նրանք շատ հեռու են, ապա պետք է փոքր քարերի նմանվեն։ Իհարկե, Պաշտամունքի պահապանները խոսում են միլիոնավոր Աստղերի մասին, բայց դա բացահայտ չափազանցություն է։ Միլիոնավոր Աստղերը տիեզերքում պարզապես չէին տեղավորվի, նրանք կդիպչեին իրար։

Շիրինը Բինիին լսում էր հարաճուն հետաքրքրությամբ։

— Քո ասածի մեջ ինչոր բան կա, Բինի։ Չափազանցություն… հենց դա էլ պատահում է։ Մեր ուղեղը, ինչպես գիտեք, ընդունակ չէ միանգամից ընկալելու առարկաների ստույգ քանակը, եթե նրանց թիվն անցնում է հինգից, ավելի մեծ քանակության համար մեզ մոտ գոյություն ունի «շատ» հասկացությունը։ Այդ կերպ էլ տասնյակը վեր է ածվում միլիոնի։ Ա՜յ թե հետաքրքիր միտք է։

— Հենց նոր մտքովս անցավ եւս մեկ ուշագրավ գաղափար,— շարունակեց Բինին։— Դուք երբեւէ մտածե՞լ եք այն մասին, թե որքան կհեշտանար ձգողականության պրոբլեմը, եթե մենք գործ ունենայինք համեմատաբար ոչ բարդ համակարգի հետ։ Պատկերացրեք, որ Տիեզերքը միայն մեկ արեւ ունի։ Մոլորակը կպտտվեր կանոնավոր էլիպսաձեւ ուղեծրով, եւ ձգողականության ուժի ստույգ բնույթը ակնհայտ կլիներ առանց որեւէ ապացուցման։ Այդպիսի աշխարհի աստղագետները կհայտնաբերեին ձգողականությունը, թերեւս, աստղադիտակի գյուտից էլ շուտ։ Նրանց համար անզեն աչքով պարզ դիտումն էլ բավական կլիներ։

— Բայց այդպիսի համակարգն արդյո՞ք դինամիկորեն կայուն կլիներ,— կասկածեց Շիրինը։

— Իհարկե։ Դա այսպես կոչված «երկու մարմինների դեպքն է»։ Մաթեմատիկորեն դա հետազոտվել է, բայց ինձ հարցի փիլիսոփայական կողմն է հետաքրքրում։

— Որքան հաճելի է այսպիսի նրբին վերացարկումներով խոսելը,— նկատեց Շիրինը։

— Բնականաբար,— շարունակեց Բինին,— վատն այն է, որ այդպիսի մոլորակի վրա կյանքն անհնարին կլիներ։ Նա բավականաչափ լույս եւ ջերմություն չէր ստանա, ու եթե պտտվեր, ապա ամեն մի օրվա կեսը կլիներ լրիվ խավար, ուստի կյանքը, որի գոյության առաջին պայմանը լույսն է, չէր կարող զարգանալ այդ մոլորակի վրա։

— Ատոնը ջահեր բերեց,— ընդհատեց նրան Շիրինը, այնպես թափով վեր թռչելով տեղից, որ շուռ տվեց աթոռը։

Ատոնը ձեռքում բռնել էր մեկ ֆուտ երկարությամբ եւ մեկ դյույմ լայնությամբ մի տասնյակ ձողեր։ Նա ձողերի վերեւից խիստ հայացք նետեց իր շուրջը հավաքված աստղադիտարանի աշխատակիցների վրա։

— Իսկույն գնացեք ձեր տեղերը։ Շիրին, եկեք այստեղ, օգնեք ինձ։

Շիրինը վազելով մոտեցավ ծերուկին, եւ բացարձակ լռության մեջ նրանք սկսեցին ձողերը տեղադրել պատերին ամրացված պահիչների մեջ։

Ասես ձեռնամուխ լինելով ինչոր սրբազան խորհրդի գերագույն ծեսի արարողությանը, Շիրինը վառեց խոշոր եւ անճոռնի լուցկու հատիկը, եւ երբ այն, կայծեր սփռելով, բոցավառվեց, տվեց Ատոնին, որը բոցը մոտեցրեց ձողերից մեկի ծայրին։

Սկզբում բոցը ապարդյուն լիզում էր ձողի ծայրը, բայց հետո անսպասելի դեղին բռնկումը պայծառ լուսավորեց Ատոնի կենտրոնացած դեմքը։ Նա մի կողմ տարավ լուցկին, եւ սենյակը այնպես թնդաց հրճվալի բացականչություններից, որ ապակիները զնգզնգացին։

Ձողի վերեւում հուրհրում էր բոցի վեց դյույմանոց երերուն լեզուն։ Իրար ետեւից վառեցին մյուս ձողերն էլ, եւ վեց կրակները դեղին լույսով ողողեցին նույնիսկ սենյակի հեռավոր անկյունները։

Լույսը աղոտ էր եւ զիջում էր նույնիսկ մթագնած արեւի ճառագայթներին։ Բոցը դեսուդեն էր նետվում, ծնելով հարբած, օրորվող ստվերներ։ Ջահերը հուսահատորեն մխում էին, եւ սենյակը լցվեց այնպիսի հոտով, ասես անշնորհք տանտիկին էր գործ արել խոհանոցում։ Բայց եւ այնպես դրանք դեղին լույս էին սփռում շուրջը։ Դեղին լույսը հատկապես հաճելի էր թվում այն բանից հետո, երբ երկնքում արդեն չորս ժամ աղոտանում էր դժնի Բետան։ Նույնիսկ Լատիմերը կտրվեց իր գրքից եւ զարմանքով նայեց ջահերին։

Շիրինը ձեռքերն էր տաքացնում կրակի վրա, ուշադրություն չդարձնելով, որ մաշկն արդեն ծածկվում էր մոխրագույն մրի շերտով։

— Սքանչելի՜ է։ Սքանչելի՜ է։ Երբեք մտքովս չէր անցնի, որ դեղին լույսն այսքան գեղեցիկ է,— մռթմռթում էր նա հիացած։

Սակայն Տերեմոնը կասկածանքով էր նայում ջահերին։ Դեմքը կնճռոտելով կծու ծխից՝ նա հարցրեց.

— Սա ի՞նչ բան է։

— Փայտ է,— կարճ պատասխանեց Շիրինը։

— Բայց դրանք չեն վառվում։ Ածխացել է միայն ծայրը, իսկ բոցը շարունակում է դուրս պրծնել ոչնչից։

— Հենց դրանում է ամբողջ հմայքը։ Դա շատ արդյունավետ մեխանիզմ է արհեստական լույս ստանալու համար։ Մենք դրանցից մի քանի հարյուր հատ պատրաստել ենք, սակայն մեծ մասը, իհարկե, գտնվում է Ապաստարանում։— Այստեղ Շիրինը շրջվեց եւ մրոտ ձեռքերը սրբեց թաշկինակով։— Սկզբունքը սա է. վերցնում ենք եղեգնի սպունգանման միջուկը, չորացնում ենք եւ ներծծում կենդանական ճարպով։ Հետո վառում ենք, եւ ճարպը աստիճանաբար այրվում է։ Այս ջահերը առանց դադարելու կվառվեն գրեթե կես ժամ։ Սրամիտ է, չէ՞։ Սա Սարոյի համալսարանի երիտասարդ գիտնականներից մեկի գյուտն է։

Շուտով գմբեթում տիրող աշխուժությունը մարեց։ Լատիմերը իր աթոռը դրեց ուղիղ ջահի տակ եւ, շրթունքները շարժելով, շարունակեց միալար կարդալ Աստղերին ուղղված աղոթքները։ Բինին դարձյալ գնաց իր խցիկների մոտ, իսկ Տերեմոնը օգտվեց առիթից՝ լրացնելու իր նշումները այն հոդվածի համար, որ պատրաստվում էր մյուս օրը գրել «Խրոնիկայի» պատվերով։ Վերջին երկու ժամը նա խնամքով, ջանադիր, եւ ինչպես շատ լավ հասկանում էր ինքը, անօգուտ զբաղվում էր այդ գործով։

Սակայն (դա, թերեւս, նկատեց նաեւ Շիրինը, որը քմծիծաղով նայում էր լրագրողին) այդ զբաղմունքը օգնում էր նրան չմտածել այն մասին, որ երկնակամարը հետզհետե ստանում է նոր մաքրած տհաճ կարմրակապույտ գույնը, եւ այդպիսով արդարացնում էր իրեն։

Թվում էր, թե օդն ավելի է թանձրացել։ Մթնշաղը, ինչպես շոշափելի նյութ, սողում էր սենյակի մեջ, եւ դեղին լույսի պարող շրջանը ավելի ու ավելի էր առանձնանում խտացող մթության մեջ։ Ծխի հոտ էր գալիս, ջահերը ճտճտում էին, ինչոր մեկը ոտքի թաթերի վրա զգուշորեն անցավ սեղանի մոտով, որտեղ աշխատում էին մյուսները, մերթ ընդ մերթ որեւէ մեկը զուսպ հառաչում էր, ճգնելով հանգստություն պահպանել այս աշխարհում, որ գնում էր դեպի ստվերը։

Առաջինը աղմուկը լսեց Տերեմոնը։ Նա նույնիսկ չլսեց, այլ աղոտ զգաց ինչոր ձայներ, որոնք ոչ ոք չէր զգա, եթե գմբեթում մեռյալ լռություն չտիրեր։

Ժուռնալիստն ուղղվեց տեղում եւ թաքցրեց նոթատետրը։ Շունչը պահելով նա ունկնդրեց, իսկ հետո, անցնելով սոլարոսկոպի եւ Բինիի խցիկներից մեկի արանքով, դժկամորեն մոտեցավ պատուհանին։

Լռությունը հատեց նրա հանկարծակի ճիչը.

— Շիրի՛ն։

Բոլորը թողեցին աշխատանքը։ Մի ակնթարթում հոգեբանը հայտնվեց ժուռնալիստի կողքին։ Այնուհանդերձ նրանց մոտեցավ Ատոնը։ Նույնիսկ Ցիմոտ 70ը, որը տեղավորվել էր բարձր աթոռակի վրա՝ օդի մեջ, վիթխարի սոլարոսկոպի ակնապակու մոտ, գլուխն իջեցրեց եւ ցած նայեց։

Բետայից մնացել էր միայն մի մարող բեկոր, որն իր վերջին հուսակտուր հայացքն էր նետում Լազաշի վրա։ Արեւելքում, որտեղ գտնվում էր քաղաքը, հորիզոնը պարուրված էր Խավարով, իսկ Սարոյից աստղադիտարան ձգվող ճանապարհը դարձել էր դժգույն կարմիր մի շերտ, որը երկու կողմերից եզերված էր պուրակներով։ Առանձին ծառերն արդեն չէին երեւում, նրանք ձուլվել էին մի ընդհանուր մուգ զանգվածի մեջ։

Բայց հենց ճանապա՛րհն էր իր վրա գամել բոլորի ուշադրությունը, որովհետեւ այնտեղ սպառնալից եռում էր մի ուրիշ մուգ զանգված։

— Խելագարնե՛ր քաղաքից։ Նրանք արդեն մոտ են,— բեկբեկուն ձայնով գոռաց Ատոնը։

— Ինչքա՞ն է մնացել մինչեւ լրիվ խավարումը,— հարցրեց Շիրինը։

— Տասնհինգ րոպե, բայց… բայց… նրանք այստեղ կլինեն հինգ րոպե հետո։

— Կարեւոր չէ։ Հետեւեք, որպեսզի բոլորը շարունակեն աշխատել։ Մենք նրանց ներս չենք թողնի։ Այս շենքի պատերը բերդի պարիսպների պես ամուր են։ Ատոն, համենայն դեպս աչքներդ մի՛ կտրեք մեր անկոչ հյուրից։ Տերեմոն, եկեք ինձ հետ։

Տերեմոնը Շիրինի ետեւից դուրս վազեց սենյակից։ Սանդուղքը պարուրաձեւ իջնում էր ներքեւ, դեպի խոնավ ու դժնի մութը։

Ոչ մի րոպե չհապաղելով՝ նրանք իներցիայով իջան եւս մի հարյուր աստիճան, սակայն գմբեթի դռներից ընկնող աղոտ դեղին լույսը անհետացավ, եւ ամեն կողմից նրանց պարուրեց չարագույժ թանձր ստվերը։

Շիրինը կանգ առավ եւ թմբլիկ ձեռքով բռնեց կուրծքը։ Նրա աչքերը դուրս պրծան, իսկ ձայնը նմանվեց չոր հազի։

— Ես չեմ կարող… շնչել… Իջեք ներքեւ… մենակ։ Փակեք բոլոր դռները…

Տերեմոնը մի քանի աստիճան էլ իջավ եւ շրջվեց։

— Սպասեք։ Դուք կարո՞ղ եք մի րոպե դիմանալ,— գոռաց նա։

Տերեմոնը ինքն էլ էր շնչահեղձ լինում։ Օդը թոքերն էր լցնում շատ դանդաղորեն եւ այնքան թանձր, ասես մրգահյութ լիներ, եւ այն մտքից, որ մենակ պիտի իջնի դեպի խորհրդավոր Խավարը, նա անմեկնելի սարսափ էր զգում։

Ուրեմն, մթությունն այնուամենայնիվ իրե՞ն էլ է սարսափով համակում։

— Կանգնեք այստեղ,— ասաց նա։— Ես հիմա կգամ։

Թռչելով աստիճանների վրայից՝ նա սլացավ գմբեթ։ Սիրտը մոլեգնաբար թպրտում էր կրծքում, եւ ո՛չ միայն ֆիզիկական ջանքերից։ Նա խուժեց գմբեթ եւ պահիչից արագ վերցրեց վառվող ջահը։ Ջահից գարշահոտություն էր փչում, ծուխը ծածկում էր աչքերը, բայց Տերեմոնը, հրճվալից սեղմելով ձեռքում, արդեն ներքեւ էր սլանում աստիճաններով։

Երբ Տերեմոնը կռացավ Շիրինի վրա, նա բացեց աչքերն ու տնքաց։ Տերեմոնը ամբողջ ուժով ցնցեց նրան։

— Դե՛, ուշքի եկեք։ Մենք լույս ունենք։

Նա որքան հնարավոր է վեր բարձրացրեց ջահը, եւ, բռնելով սայթաքող հոգեբանի արմունկը, ուղղվեց ներքեւ, աշխատելով մնալ լույսի փրկարար օղակի մեջտեղում։

Դրսի աղոտ լույսը դեռեւս թափանցում էր առաջին հարկի աշխատասենյակները, եւ Տերեմոնը իրեն ավելի լավ զգաց։

— Պահե՛ք,— կոպիտ ասաց նա եւ ջահը մտցրեց Շիրինի ձեռքը։— Լսո՞ւմ եք նրանց ձայները։

Նրանք ականջ դրեցին եւ անկապ, խռպոտ ճիչ ու վայնասուն լսեցին։

Շիրինը իրավացի էր. աստղադիտարանը նման էր ամրոցի։ Կառուցված լինելով անցյալ դարում, երբ այլանդակ նեոգավոտյան ոճը իր բուռն ծաղկումն էր ապրում, շենքը աչքի էր զարնում ոչ թե իր գեղեցկությամբ, այլ ամրությամբ եւ պատկառելիությամբ։

Պատուհանները ունեին երկաթե ճաղեր, որոնց ծայրերը խոր մտած էին բետոնե երեսապատման մեջ։ Քարե պատերն այնքան հաստ էին, որ նույնիսկ երկրաշարժը չէր կարող տապալել դրանք, իսկ մուտքի դուռը ամուր կաղնեփայտից էր եւ երկաթապատված։ Տերեմոնը նիգերով փակեց դուռը։

Միջանցքի մյուս ծայրին կամացուկ հայհոյում էր Շիրինը։ Նա ցույց տվեց ետնամուտքի դուռը, որի կողպեքը խնամքով կոտրված էր։

— Այ թե ոնց է Լատիմերը ներս մտել,— ասաց նա։

— Դե ի՞նչ եք փայտի պես ցցվել,— անհամբեր գոռաց Տերեմոնը։— Օգնեք կահույքը քարշ տանք… Եվ ջահն էլ մի կողմ տարեք։ Այս ծուխը կխեղդի ինձ։

Այդ ասելով, ժուռնալիստը ծանր սեղանը աղմուկով քշեց դեպի դուռը։ Երկու րոպեի ընթացքում նա մի այնպիսի բարիկադ կառուցեց, որ թեեւ զուրկ էր գեղեցկությունից եւ համաչափությունից, սակայն լիովին ամուր էր ու դիմացկուն։

Հեռվից լսվեցին մուտքի դռանը զարնվող բռունցքների խուլ հարվածներ, գոռումգոչյուն, վայնասուն, բայց այս ամենը կարծես նրանք լսում էին կիսարթուն վիճակում։

Սարոյից այստեղ հասած ամբոխը բռնված էր աստղադիտարանը կործանելու ցանկությամբ, որպեսզի հոգու անմահություն ստանա, ինչպես խոստանում էր Պաշտամունքը։ Խելահեղ սարսափը մարդկանց զրկել էր բանականությունից։ Նրանք անզեն ձեռքերով հարձակվեցին աստղադիտարանի վրա եւ փորձեցին ջարդել դռները։

Այդ ժամանակ արդեն Բետան նվազել, դարձել էր արնակարմիր բոցի մի կաթիլ, որը թույլ առկայծում էր համապարփակ սարսափով բռնված մարդկության գլխավերեւում…

— Վերադառնանք գմբեթ,— հառաչելով ասաց Տերեմոնը։

Գմբեթում միայն Յիմոտն էր շարունակում նստած մնալ իր տեղում, սոլարոսկսպի մոտ։ Մնացածները խմբվել էին լուսանկարչական ապարատների մոտ։ Լարվածությունից խռպոտած ձայնով վերջին ցուցմունքն էր տալիս Բինին։

— Յուրաքանչյուրը թող իր համար պարզի… Ես լուսանկարում եմ Բետան լրիվ խավարման պահին եւ փոխում եմ թիթեղը։ Ձեզնից յուրաքանչյուրին մի խցիկ է հանձնարարվում։ Դուք բոլորդ գիտեք, թե որքան պիտի պահեք…

Մյուսները կիսաձայն հաստատեցին նրա ասածները, Բինին ձեռքով տրորեց աչքերը։

— Ջահերը դեռ վառվո՞ւմ են… Ասենք, ինքս էլ եմ տեսնում։

Նա ամուր հենվեց աթոռի թիկնակին։

— Հիշեք, մի՛… մի ջանացեք լավ նկարներ ստանալ։ Ժամանակ մի կորցրեք, մի փորձեք միաժամանակ երկու աստղ լուսանկարել։ Մեկն էլ հերիք է… Եվ… եւ եթե մեկնումեկը կզգա, որ իր մոտ սկսվել է… Թող անմիջապես հեռանա խցիկից։

— Տարեք ինձ Ատոնի մոտ։ Ես նրան չեմ տեսնում,— շշնջաց Շիրինը Տերեմոնին։

Ժուռնալիստն իսկույն չարձագանքեց։ Նա արդեն տեսնում էր ոչ թե մարդկանց, այլ նրանց աղոտ, տարտամ ստվերները, ջահերի դեղին բծերը գրեթե լույս չէին տալիս։

— Մութ է,— տրտնջաց նա։

Շիրինը առաջ պարզեց ձեռքերը եւ ասաց.

— Ատո՛ն։

Ու երերալով առաջ գնաց։

Տերեմոնը բռնեց նրա արմունկից։

— Սպասեք, ես ձեզ կտանեմ։

Նրան մի կերպ հաջողվեց անցնել սենյակի մյուս ծայրը։ Նա կկոցեց աչքերը, հրաժարվելով տեսնել Խավարը, հրաժարվելով հավատալ, որ խուճապը համակում է իրեն։ Ոչ ոք չլսեց նրանց ոտնաձայները, ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրանց վրա։ Շիրինը դեմ առավ պատին։

— Ատո՛ն։

— Հոգեբանն զգաց իրեն կպչող ձեռքերի դողը եւ լսեց շշնջոցը։

— Այդ դո՞ւք եք, Շիրին։

— Ատոն,— ասաց Շիրինը, ճգնելով հանգիստ շնչել։— Ամբոխից մի վախեցեք։ Նրանք այստեղ չեն մտնի։

Լատիմերը՝ Պաշտամունքի պահապանը, վեր կացավ տեղից. նրա դեմքը այլայլվել էր հուսահատությունից։ Նա խոսք էր տվել, եւ եթե այն խախտեր, ապա մահացու վտանգի կենթարկեր իր հոգին։ Բայց չէ որ նրան ստիպել էին, եւ ինքը կամավոր չէր երդվել։ Շուտով կհայտնվեն Աստղերը, նա չի կարող հանգիստ կանգնել ու թույլ տալ… Եվ այնուամենայնիվ… խոսք էր տվել։

Բետայի վերջին ճառագայթի տակ Բինիի դեմքը թվում էր բոսորագույն, եւ Լատիմերը, տեսնելով, որ նա կռացավ լուսանկարչական ապարատի վրա, վճիռն ընդունեց։ Հուզմունքից նրա եղունգները խրվեցին փափուկ ափերի մեջ։

Օրորվելով, նա առաջ նետվեց։ Նրա դիմաց ոչինչ չկար, բացի ստվերներից, նույնիսկ հատակը թվում էր աննյութեղեն։ Իսկ հետո ինչոր մեկը հարձակվեց նրա վրա, գետին գցեց եւ կառչեց կոկորդից։

Լատիմերը որքան ուժ ուներ ծնկով հարվածեց ախոյանին.

— Թողե՛ք ինձ, թե չէ կսպանեմ ձեզ։

Տերեմոնը գոռաց, հետո, հաղթահարելով սոսկալի ցավը, մռթմռթաց.

— Ախ, դու, ստո՛ր առնետ։

Նրա գիտակցությունը, թվում է, ամեն ինչ միանգամից էր ընկալում։ Նա լսեց Բինիի խռպոտ ձայնը. «Սկսեցինք։ Բոլորդ մոտեցեք խցիկներին», եւ նույն պահին էլ ինչոր կերպ գիտակցեց, որ արեգակնային լույսի վերջին ճառագայթը մարեց ու չքացավ։

Միաժամանակ նա լսեց, թե ինչպես կտրվեց Բինիի շունչը, ինչպես տարօրինակ ճչաց Շիրինը, ինչպես ընդհատվեց մեկի հիստերիկ ծիծաղը… եւ ինչպես դրսում տիրեց լռություն, տարօրինակ մեռյալ լռություն։

Տերեմոնը զգաց, որ բաց է թողնում ձեռքերը, բայց Լատիմերի մարմինն էլ մի տեսակ թուլացավ ու կակղեց։ Նայելով Պաշտամունքի պահապանի աչքերին՝ նա այնտեղ տեսավ ապակիացած դատարկչություն, որտեղ արտացոլվում էին ջահերի դեղին

օղակները։ Նա տեսավ Լատիմերի շրթունքների վրա պղպջացող փրփուրը եւ լսեց գազանային հեծեծանքը։

Վախից քարանալով, նա դանդաղ վեր կացավ՝ հենվելով մի ձեռքի վրա, եւ նայեց պատուհանի ահասարսուռ սեւությանը։

Դրսում փայլփլում էին Աստղերը։

Եվ դրանք այն խղճուկ երեք հազար վեց հարյուր աղոտ աստղերը չէին, որ անզեն աչքով երեւում էին Երկրից։ Լագաշը գտնվում էր մի վիթխարի աստղային պարսի կենտրոնում։ Երեսուն հազար հզոր արեւները շողում էին հոգեցունց վեհությամբ եւ ավելի սառն էին ու սարսափազդու իրենց զարհուրելի անտարբերությամբ, քան դաժան քամին, որ սուրում էր պաղ եւ նողկալիորեն խավար աշխարհում։

Օրորվելով՝ Տերեմոնը ոտքի կանգնեց։ Նրա կոկորդն այնպես էր սեղմվում, որ շնչել չէր կարողանում, անտանելի սարսափից ամբողջ մարմնի մկանները ջղաձգվում էին։ Նա կորցնում էր գիտակցությունը եւ գիտեր դա, իսկ գիտակցության վերջին շողերը դեռեւս տանջալիորեն դիմադրում էին, ապարդյուն ճգնելով ընդդիմանալ սեւ սարսափի հորձանքներին։ Սարսափելի է խելագարվել եւ գիտենալ, որ խելագարվում ես… գիտենալ, որ մի րոպե հետո մարմինդ առաջվա պես ողջառողջ կլինի, բայց դու, դու ինքդ ընդմիշտ կանհետանաս, կընկղմվես խելագարության մթին հորձանուտը։ Քանզի դա Խավարն է… Խավարը, Ցուրտը եւ Մահը։ Փլվեցին Տիեզերքի լուսավոր պատերը, եւ նրանց զարհուրելի սեւ բեկորները թափվեցին ներքեւ, որպեսզի ճզմեն եւ ոչնչացնեն իրեն։

Տերեմոնը դիպավ հատակի վրա չորեքթաթ սողացող ինչոր մեկին եւ քիչ մնաց վայր ընկներ։ Ձեռքերով սեղմելով ջղաձգվող կոկորդը, Տերեմոնը կաղալով գնաց դեպի ջահերի բոցը, որը նրա խելահեղ աչքերից փակել էր ողջ մնացյալ աշխարհը։

— Լո՛ւյս,— գոռաց Տերեմոնը։

Ինչոր տեղ վախեցած մանկան պես հեծկլտում էր Ատոնը։

Աստղերը… Բոլոր աստղերը… ու մենք ոչինչ չգիտեինք։ Մենք ոչ մի բան չգիտեինք։ Մենք վեց աստղը համարում էինք Տիեզերք։ Աստղեր ու Խավար հավիտյանս հավիտենից, եւ պատերը փլվում են, իսկ մենք չգիտեինք, որ չենք կարող իմանալ, եւ բոլոր…

Ինչոր մեկը փորձեց վերցնել ջահը, բայց ջահն ընկավ ու մարեց։ Եվ իսկույն էլ անտարբեր Աստղերի զարհուրելի վեհությունը շարժվեց մարդկանց վրա։

Իսկ պատուհանից դուրս, հորիզոնում, այնտեղ, ուր մի ժամանակ Սարո քաղաքն էր, ավելի ու ավելի պայծառանալով, բարձրանում էր բոսորագույն հրացոլքը, բայց դա ծագող արեւի լույսը չէր։

Նորից վրա հասավ երկար գիշերը։